

Դակարի գործողությունների շրջանակ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻ ՅԱՄԱՐ.

**մեր ընդհանուր պարտավորությունների
կատարումը**

**Տեքստն ընդունվել է կրթության համաժողովի կողմից
Դակար, Սենեգալ, 2000 թ. ապրիլի 26-28**

1. Մենք՝ 2000 թ. ապրիլին Դակարում (Սենեգալ) հավաքված կրթության համաժողովի մասնակիցներս, հայտարարում ենք յուրաքանչյուր քաղաքացու և յուրաքանչյուր հասարակության համար բոլորի համար կրթության (ԿԲՀ) նպատակներին հասնելու ու խնդիրների լուծմանը մեր նվիրվածության մասին:

2. Դակարի գործողությունների շրջանակը ներկայացնում է նրա մասնակիցների գործելու ընդհանուր պարտավորությունը: Կառավարությունների վրա է ընկած ապահովելու ԿԲՀ նպատակներին հասնելու և խնդիրների լուծման ու ձեռք բերված մակարդակի հետագա սատարման պարտավորությունը: Սա առավել արդյունավետ հարկ է իրականացնել երկրի ներսում լայն գործընկերության հիման վրա՝ տարածաշրջանային ու միջազգային մարմինների ու հաստատությունների հետ համագործակցությամբ:

3. Մենք վերահաստատում ենք Բոլորի համար կրթության մասին համաշխարհային հռչակագրի հայեցակարգը (Ջոնտիեն, 1990 թ.), որը հիմնվում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի և Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի վրա և որի իմաստն այն է, որ յուրաքանչյուր երեխա, պատանի ու չափահաս՝ որպես մարդ, օժտված է կրթության իրավունքով, որը բավարարում է նրա հիմնական կրթական կարիքները այս հասկացության խոր ու լիակատար իմաստով, այսինքն՝ այնպիսի կրթության, որը նրան հնարավորություն է ընձեռում սովորելու ճանաչել, գործել և ապրել մյուսների հետ և գոյություն ունենալ: Խոսքն այնպիսի կրթության մասին է, որն ուղղված է յուրաքանչյուր մարդու տաղանդների ու ներուժի բացահայտմանն ու սովորողների անձի զարգացմանը, որպեսզի մարդիկ կարողանան լավացնել սեփական կյանքը և վերափոխել իրենց հասարակությունները:

4. Մենք ողջունում ենք 1990-ական թվականներին հիմնական կրթության առնչությամբ միջազգային հանրության ընդունած պարտավորությունները, մասնավորապես, Ի շահ երեխաների բարձր մակարդակի համաշխարհային հանդիպման ընթացքում (1990 թ.), Շրջակա միջավայրին ու զարգացմանը նվիրված կոնֆերանսում

(1992 թ.), Սարդու իրավունքների համաժողովում (1993 թ.), Յատուկ կարիքի կրթություն. մատչելիություն և որակ համաժողովում (1994 թ.), Բնակչությանն ու զարգացմանը նվիրված համաժողովում (1994 թ.), Ի շահ սոցիալական զարգացման բարձր մակարդակի համաշխարհային հանդիպման ընթացքում (1995 թ.), Կանանց դրությունը նվիրված չորրորդ համաժողովում (1995 թ.), Տասնամյակի կեսի գնահատմանը նվիրված բոլորի համար կրթության միջազգային խորհրդատվական համաժողովում, (1996 թ.), Մեծահասակների կրթության հինգերորդ միջազգային կոնֆերանսում (1997 թ.) և Երեխայի աշխատանքի հիմնախնդիրներին նվիրված միջազգային կոնֆերանսում (1997 թ.): Այժմ խնդիրն այդ պարտավորությունները կատարելն է:

5. ԿԲՀ 2000-ի գնահատումը վկայում է, որ բազմաթիվ երկրներում զգալի առաջընթաց է ձեռք բերվել: Սակայն 2000 թվականին անընդունելի է, որ ավելի քան 113 մլն երեխա չունի տարրական կրթության հնարավորություն, 880 մլն մեծահասակներ անգրագետ են, որ կրթության համակարգերում նախկինի պես դրսևորվում է խտրականություն սեռի հատկանիշով, իսկ ուսուցման և մարդասիրական արժեքների և հմտությունների յուրացման որակը ամենևին չի համապատասխանում մարդկանց ու հասարակությունների ակնկալիքներին ու կարիքներին: Երիտասարդներն ու մեծահասակները զրկված են վարձատրվող աշխատանքի և իրենց հասարակության կյանքին համակողմանի մասնակցության համար անհրաժեշտ հմտություններ ու գիտելիքներ ձեռք բերելու հնարավորությունից: Առանց դեպի բոլորի համար կրթության արագացված առաջ շարժվելու անհնար է հասնել աղքատության նվազեցման նպատակներին, որոնք համաձայնեցված են ազգային և միջազգային մակարդակներում, և ավելի կուժեղանա երկրների միջև ու հասարակության ներսում անհավասարությունը:

6. Կրթությունը մարդու հիմնական իրավունքներից է: Այն շարունակական զարգացման, խաղաղության և երկրների ներսում և երկրների միջև հարաբերություններում կայունության բանալին է, այդ իսկ պատճառով XXI դարում հասարակության կյանքում ու տնտեսության մեջ արդյունավետ մասնակցության անհրաժեշտ միջոցն

է, որոնց վրա ազդել է արագացված գլոբալացումը: ԿԲՀ նպատակներին հասնելը այլևս անհնար է հետաձգել: Բոլորի հիմնական կրթական կարիքները կարող են և պետք է անհապաղ բավարարվեն:

7. Սույնով մենք հայտարարում ենք ներքոհիշյալ նպատակներին հասնելու գործում մեր ընդհանուր նվիրվածության մասին.

- (i) մանկահասակ երեխաների խնամքի ու նրանց դաստիարակության, հատկապես առավել խոցելի և ընչազուրկ երեխաների նկատմամբ համալիր միջոցների ընդլայնում ու կատարելագործում,
- (ii) ապահովել, որ 2015 թվականին բոլոր երեխաները, հատկապես աղջիկները, անբարենպաստ միջավայրից ու էթնիկական փոքրամասնությունների երեխաները կարողանան ազատորեն ստանալ անվճար ու պարտադիր որակյալ տարրական կրթություն,
- (iii) ապահովել, որ բոլոր երիտասարդների ու մեծահասակների կրթական կարիքները բավարարվեն ուսուցման համապատասխան ծրագրերին և կենսական հմտությունների ձեռքբերման հավասար մատչելիության հիման վրա,
- (iv) 2015 թ. 50%-ով բարձրացնել մեծահասակների, հատկապես կանանց գրագիտության մակարդակը և բոլոր մեծահասակներին հիմնական և շարունակական կրթության հավասար մատչելիություն տրամադրել,
- (v) 2015 թ. տարրական և միջնակարգ կրթության մեջ գենդերային տարբերությունների վերացում և 2015 թ. կրթության ոլորտում սեռերի հավասարության ձեռքբերում՝ առանձնահատուկ ուշադրություն նվիրելով աղջիկներին որակյալ հիմնական կրթություն ստանալու լիակատար և հավասար մատչելիության տրամադրմանը և նրանց ուսման լավ առաջադիմության ապահովմանը,

(vi) կրթության որակի բարձրացում իր բոլոր առումներով և բոլորի համար լավ ուսման առաջադիմության ապահովում, որպեսզի յուրաքանչյուր ոք կարողանա հասնել ուսուցման ընդունված և գնահատման ենթակա արդյունքների, հատկապես գրաճանաչության, հաշվելու և կարևոր կենսական հմտությունների առումով:

8. Այս նպատակներին հասնելու համար մենք՝ կրթության համաժողովում ներկայացված կառավարությունները, կազմակերպությունները, հաստատությունները, խմբերն ու ընկերակցությունները պարտավորվում ենք.

(i) ապահովել ազգային և միջազգային մակարդակներում հաստատուն քաղաքական նվիրվածություն բոլորի համար կրթությանը, մշակել գործողությունների ազգային ծրագրեր և զգալիորեն ավելացնել հիմնական կրթության մեջ արվող ներդրումները,

(ii) նպաստել կրթության ոլորտի կայուն և համալիր գործառնության շրջանակներում ԿԲՀ ասպարեզում քաղաքականության վարմանը՝ սերտորեն շաղկապված աղքատության վերացման ու զարգացման ռազմավարությունների հետ,

(iii) ապահովել քաղաքացիական հասարակության շահագրգռությունն ու մասնակցությունը կրթության զարգացման ռազմավարությունների ձևակերպմանը, իրականացմանն ու մոնիթորինգին (մշտադիտարկմանը),

(iv) մշակել կրթության ղեկավարման և կառավարման համակարգեր՝ հիմնված կարիքների հաշվառման, լայն մասնակցության և հաշվետվողականության վրա,

(v) բավարարել հակամարտություններից, տարերային աղետներից և անկայունությունից տուժած կրթության համակարգերի կարիքները և իրականացնել կրթական ծրագրեր՝ փոխըմբռնմանը, խաղաղությանը և հանդուրժողականու-

թյանն օժանդակելու և բռնության ու հակամարտությունների կանխմանն օգնելու նպատակով,

(vi) իրականացնել կրթության մեջ սեռերի հավասարության ապահովման համալիր ռազմավարություններ՝ այս ասպարեզում մոտեցումների, արժեքների և պրակտիկայի փոփոխության անհրաժեշտության ընդունման հիման վրա,

(vii) շտապ կարգով իրականացնել կրթական ծրագրեր և միջոցառումներ ՄԻԱՎ/ԶԻԱԳ-ի համաճարակի դեմ պայքարի նպատակով,

(viii) ստեղծել կրթության ասպարեզում անվտանգ, առողջ, ներառական և ռեսուրսներով արդարացիորեն ապահովված պայմաններ, որոնք նպաստում են հաջող ուսուցմանը և բոլորի համար ուսման առաջադիմության հստակ սահմանված մակարդակների ձեռքբերմանը,

(ix) բարձրացնել մանկավարժների կարգավիճակը, եռանդը և պրոֆեսիոնալիզմը,

(x) յուրացնել նոր տեղեկատվական և կոմունիկացիոն տեխնոլոգիաներ ԿԲՀ նպատակներին հասնելուն օժանդակելու համար,

(xi) կանոնավորապես հետևել ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում ԿԲՀ նպատակների և ռազմավարությունների իրականացման գործում առաջընթացին, և

(xii) ամրապնդել բոլորի համար կրթության ապահովման ճանապարհին առաջընթացի արագացման համար առկա մեխանիզմները:

9. ԿԲՀ ազգային և տարածաշրջանային գնահատումների եզրակացությունների ու ազգային մակարդակում առկա յուրաքանչյուր ոլորտի ռազմավարությունների հիման վրա բոլոր պետություններին կառաջարկվի մշակել կամ ամրապնդել առկա գոր-

ծողությունների ազգային ծրագրերը 2002 թ. ոչ ուշ: Այս ծրագրերը պետք է դառնան աղքատության նվազեցման ու զարգացման գործողությունների ավելի լայն շրջանակների բաղադրիչ մաս, ու դրանք պետք է մշակել առավել թափանցիկ ու ժողովրդավարական գործընթացների հիման վրա՝ շահագրգիռ կողմերի, հատկապես բնակչության ներկայացուցիչների, հասարակական կազմակերպությունների ղեկավարների, ծնողների, սովորողների, ոչ կառավարական կազմակերպությունների (ՈԿԿ) ու քաղաքացիական հասարակության մասնակցությամբ: Այս ծրագրերում պետք է նախատեսվեն հիմնական կրթության համար ֆինանսական միջոցների քրոնիկական պակասի պատճառով հիմնախնդիրների լուծման ուղիները, հնարավորինս ավելի վաղ ժամկետներում և 2015 թ. ոչ ուշ՝ ԿԲՀ նպատակների ու խնդիրների իրականացմանը նվիրվածությունն արտացոլող բյուջետային առաջնահերթությունների սահմանման միջոցով: Դրանցում նաև կշարադրվեն այսօր կրթության հնարավորություններից զրկված մարդկանց առջև ծառայած առանձնահատուկ հիմնախնդիրների հաղթահարման հստակ ռազմավարությունները՝ նշելով աղջիկների համար կրթության ու սեռերի հավասարության ապահովման նպատակներին հաստատուն նվիրվածությունը: Այս ծրագրերը հստակություն ու որոշակիություն կհաղորդեն սույն Գործողությունների շրջանակում շարադրված նպատակներին ու ռազմավարություններին, ինչպես նաև 1990-ական թվականներին կայացած մի շարք միջազգային կոնֆերանսների մասնակիցների ստանձնած պարտավորություններին: Ազգային ռազմավարություններին սատարող տարածաշրջանային միջոցառումները կհիմնվեն առավել կայուն տարածաշրջանային ու ենթատարածաշրջանային կազմակերպությունների, ցանցերի ու նախաձեռնությունների վրա:

10. Անհրաժեշտ են քաղաքական կամք ու ազգային ղեկավարության ուժեղացում համապատասխան երկրներից յուրաքանչյուրում ազգային ծրագրերի արդյունավետ ու հաջող իրականացման համար: Սակայն քաղաքական կամքը պետք է ամրապնդվի միջոցներով: Միջազգային հանրությունն ընդունում է, որ ներկայումս բազմաթիվ երկրներ ողջամիտ ժամկետներում բոլորի համար կրթություն ապահովելու համար միջոցների պակաս ունեն: Ուստի երկկողմ ու բազմակողմ ֆինանսավորող հաստատությունները, ներառյալ Համաշխարհային բանկը և տարածաշրջա-

նային զարգացման բանկերը, ինչպես նաև մասնավոր հատվածը պետք է ներգրավեն նոր ֆինանսական միջոցներ, նախընտրելի է՝ դրամաշնորհների և արտոնյալ պայմաններով օգնություն ցույց տալու ձևով: Մենք հաստատում ենք, որ բոլորի համար կրթությունն ապահովելու գաղափարին խորապես նվիրված ոչ մի երկիր միջոցների բացակայության պատճառով չպետք է հետ կանգնի այս նպատակին հասնելու իր ձգտումից:

11. Ի պատասխան այս ընդհանուր պարտավորությանը՝ միջազգային հանրությունն անհապաղ կարծազանքի գլոբալ նախաձեռնությամբ՝ ուղղված ազգային ջանքերին արդյունավետ աջակցելու համար անհրաժեշտ ռազմավարությունների մշակմանն ու միջոցների համախմբմանը: Այս նախաձեռնության շրջանակներում կքննարկվեն հետևյալ տարբերակները.

- (i) կրթությանը, մասնավորապես՝ հիմնական կրթությանը արտաքին ֆինանսավորման ծավալի ավելացում,
- (ii) արտաքին օգնության հոսքի ավելի մեծ կանխատեսելիության ապահովում,
- (iii) աջակցություն դոնորների առավել արդյունավետ համակարգմանը,
- (iv) ընդհանուր ոլորտներին վերաբերող մոտեցումների ամրապնդում,
- (v) պարտքի վաղաժամկետ, առավել հիմնավոր և լայնածավալ դուրսգրում և/կամ պարտքի չեղյալ հայտարարում՝ աղքատության նվազեցման նպատակներով և հիմնական կրթության նկատմամբ կայուն պարտավորությունների ստանձնում, և
- (vi) ԿԲՀ նպատակներին ու խնդիրներին հասնելու ուղղությամբ առաջընթացի առավել արդյունավետ և կանոնավոր մշտադիտարկման իրականացում, ներառյալ պարբերական գնահատումների իրականացում:

12. Բազմաթիվ երկրներում արդեն կան ցցուն օրինակներ, թե ինչի է հնարավոր հասնել զարգացման նպատակներով արդյունավետ համագործակցությամբ ամրապնդված ուժեղ ազգային ռազմավարությունների օգնությամբ: Այս ռազմավարությունների իրականացման ընթացքում ձեռք բերված առաջընթացը հնարավոր է և հարկ է արագացնել միջազգային աջակցության ավելացման հաշվին: Միաժամանակ, նվազ մշակված ռազմավարություններ ունեցող, ներառյալ անցումային շրջանի, հակամարտություններից տուժած և ճգնաժամ ապրած երկրներին անհրաժեշտ է աջակցել, որի կարիքը նրանք զգում են՝ բոլորի համար կրթության ապահովման ուղղությամբ առավել արագ առաջ շարժվելու նպատակով:

13. Մենք կամրապնդենք հաշվետու միջազգային և տարածաշրջանային մեխանիզմները, որպեսզի ապահովենք այդ պարտավորությունների հստակ ըմբռումը և որպեսզի Դակարի գործողությունների շրջանակը դառնա յուրաքանչյուր միջազգային ու տարածաշրջանային կազմակերպության, յուրաքանչյուր ազգային օրենսդիր մարմնի և որոշումների ընդունման համար պատասխանատու յուրաքանչյուր տեղական համաժողովի օրակարգի բաղադրիչ մասը:

14. ԿԲՀ 2000-ի գնահատման մեջ ընդգծվում է, որ բոլորի համար կրթության ապահովման հիմնախնդիրն առավել սրությամբ է ծառայած Սահարայից դեպի հարավ ընկած աֆրիկյան երկրներում, Հարավային Ասիայում և առավել նվազ զարգացած երկրներում: Ուստի, թեպետ չի կարելի մերժել կարիք ունեցող ոչ մի երկրի միջազգային օգնությունը, այս տարածաշրջաններն ու երկրները պետք է առաջնահերթ լինեն: Հակամարտության վիճակում գտնվող կամ վերականգնմամբ զբաղվող երկրներին նույնպես պետք է առանձնահատուկ ուշադրություն և ավիրել նրանց կրթության համակարգերը ձևավորելիս, որպեսզի դրանք համապատասխանեն բոլոր սովորողների կարիքներին:

15. Վերը շարադրված նպատակների և ռազմավարությունների իրականացման համար կպահանջվեն ազգային, տարածաշրջանային ու միջազգային մեխանիզմներ, որոնց ստեղծմանը պետք է անհապաղ ձեռնամուխ լինել: Այդ մեխանիզմների առա-

վել արդյունավետությունն ապահովելու համար դրանք կստեղծվեն լայն մասնակցության հիման վրա և այնտեղ, որտեղ հնարավոր է, կօգտագործվի արդեն առկա փորձը: Դրանց կազմի մեջ կմտնեն բոլոր կողմերի ու գործընկերների ներկայացուցիչները, և նրանց գործունեությունը կլինի թափանցիկ ու հաշվետու: Նրանք կգործեն ամբողջությամբ Ջոնտիենի հռչակագրի և Դակարի գործողությունների շրջանակի տառին ու ոգուն համապատասխան: Այս մեխանիզմները կկատարեն տարբեր աստիճանի այնպիսի գործառույթներ, ինչպիսիք են նպատակների քարոզչությունը, միջոցների համախմբումը, մշտադիտարկումը, ԿԲՅ մասին գիտելիքների կուտակումը և դրանց փոխանակումը:

16. ԿԲՅ հիմնական աշխատանքն իրականացվում է երկրների մակարդակով: Կամրապնդվեն կամ կստեղծվեն ԿԲՅ ազգային ֆորումներ՝ դրան սատարելու նպատակով: Այս ֆորումներում կանոնավորապես կներկայացվեն բոլոր համապատասխան նախարարություններն ու քաղաքացիական հասարակության ազգային կազմակերպությունները: Դրանք պետք է թափանցիկ ու ժողովրդավարական լինեն և պետք է ենթաազգային մակարդակներում գործունեության իրականացման հիմք դառնան: Երկրները 2002 թվականից ոչ ուշ կպատրաստեն ԿԲՅ համալիր ազգային ծրագրեր: Այնպիսի լուրջ հիմնախնդիրների, ինչպիսիք են ընդհանուր ճգնաժամերը և տարերային աղետները, բախվող երկրներին միջազգային հանրությունը կտրամադրի հատուկ տեխնիկական աջակցություն: ԿԲՅ յուրաքանչյուր ազգային ծրագիր.

- (i) կմշակվի երկրի ղեկավարության կողմից կառավարության մակարդակով ազգային քաղաքացիական հասարակության հետ ուղղակի և կանոնավոր խորհրդատվությունների հենքի վրա,
- (ii) կօգտվի զարգացման ասպարեզում բոլոր գործընկերների համակարգված աջակցությունից,
- (iii) կորոշի ԿԲՅ վեց նպատակներին հասնելու համար անհրաժեշտ բարեփոխումները,

- (iv) կուրվագծի կայուն ֆինանսավորման ապահովման ուղիները,
- (v) ժամկետները սահմանափակ կլիմեն և ուղղված կլիմի դեպի որոշակի գործունեություն,
- (vi) կներառի գործունեության արդյունավետության միջնաժամկետ ցուցանիշներ, և
- (vii) ուղղված կլիմի մարդկային ռեսուրսների զարգացման բոլոր ջանքերի համախմբմանը հասնելուն՝ զարգացման ծրագրման ազգային գործընթացում այն ներառելու ճանապարհով:

17. Այնտեղ, որտեղ տեղի կունենան այս գործընթացները և որտեղ գոյություն կունենա վստահություն վայելող ծրագիր, միջազգային հանրության գործընկեր հանդիսացող մասնակիցները պարտավորություն են ստանձնում համաձայնեցված, համակարգված և տրամաբանորեն հետևողական կերպով աշխատելու: Յուրաքանչյուր գործընկեր՝ հաշվի առնելով իր հարաբերական գերազանցությունը, ԿԲՀ ազգային ծրագրերի իրականացման գործում իր ներդրումը կունենա՝ ռեսուրսների երևան եկող պակասը վերացնելու նպատակով:

18. Ազգային ջանքերին սատարելու տարածաշրջանային գործունեությունը կիրականացվի գործող տարածաշրջանային ու ենթատարածաշրջանային կազմակերպությունների, ցանցերի և նախաձեռնությունների հենքի վրա, որոնք անհրաժեշտության դեպքում հետագա զարգացում կստանան: Տարածաշրջաններն ու ենթատարածաշրջանները որոշում կկայացնեն ԿԲՀ գլխադասային ցանցի առնչությամբ, որը կդառնա տարածաշրջանային կամ ենթատարածաշրջանային ֆորում՝ ԿԲՀ հստակ արտահայտված մանդատով: Կարևոր նշանակություն ունեն քաղաքացիական հասարակության բոլոր համապատասխան ներկայացուցիչների և այլ տարածաշրջանային ու ենթատարածաշրջանային կազմակերպությունների կանոնավոր մասնակցությունը և նրանց գործունեության համակարգումը: ԿԲՀ այս տա-

րածաշրջանային և ենթատարածաշրջանային ֆորումները օրգանապես կապված և հաշվետու կլինեն ԿԲՀ ազգային ֆորումներին: Նրանց գործառույթները կլինեն հետևյալը. բոլոր համապատասխան ցանցերի գործունեության համակարգում. տարածաշրջանային/ենթատարածաշրջանային նպատակների հաստատում և դրանց հասնելուն հետևել. հանրայնացման գործունեություն. քաղաքական երկխոսություն. գործընկերության և տեխնիկական համագործակցության ամրապնդում. առաջավոր փորձի ու ձեռք բերված արդյունքների փոխանակում. մշտադիտարկում և հաշվետվողականություն. ինչպես նաև օժանդակություն միջոցների համախմբմանը: ԿԲՀ ոլորտում տարածաշրջանային և ենթատարածաշրջանային ֆորումների և համապատասխան ներուժի ամրապնդման նպատակով կտրամադրվի տարածաշրջանային և միջազգային աջակցություն, հատկապես Աֆրիկայի և Հարավային Ասիայի երկրներին:

19. ՅՈՒՆԵՍԿՕ-ն նախկինի պես կկատարի մանդատով վերապահված իր դերը՝ համակարգելով ԿԲՀ գործընկերների գործունեությունը և փոխգործակցելով: Այս առնչությամբ ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենը ամեն տարի կգումարի ձևում գործող և բարձր մակարդակի փոքրակազմ խմբի խորհրդակցություն: Այն կծառայի քաղաքական պարտավորությունների իրականացման, ինչպես նաև տեխնիկական ու ֆինանսական ռեսուրսների համախմբման միջոց: Մշտադիտարկման մասին զեկույցներում պարունակվող տեղեկատվության հիման վրա, որը ներկայացնում են ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության ծրագրման միջազգային ինստիտուտը (ԿԾՄԻ), ՅՈՒՆԵՍԿՕ-ի լուսավորության միջազգային բյուրոն (ԼՄԲ), ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության ինստիտուտը (ՅՈՒԿԻ) և, հատկապես, ՅՈՒՆԵՍԿՕ-ի վիճակագրության ինստիտուտը, ինչպես նաև ԿԲՀ տարածաշրջանային և ենթատարածաշրջանային ֆորումների եզրակացությունների հիման վրա կապահովվի նաև հնարավորություն, որը թույլ կտա միջազգային հանրությանն ամփոփել Դակարում ստանձնած պարտավորությունների կատարման արդյունքները: Այս միջոցառմանը կմասնակցեն զարգացող ու զարգացած երկրների կառավարությունները և քաղաքացիական հասարակությունը ներկայացնող ամենաբարձր մակարդակի ղեկավարներ, ինչպես նաև զարգացման հարցերով հաստատություններ:

20. ՅՈՒՆԵՍԿՕ-ն կապահովի քարտուղարության ծառայությունը: Այն կրթության ասպարեզի իր ծրագրի շեշտադրումները կփոխի այնպես, որ Դակարում նախանշված եզրակացություններն ու առաջնահերթությունները կենտրոնական տեղ զբաղեցնեն նրա գործունեության մեջ: Դակարում սահմանված վեց նպատակներից յուրաքանչյուրի գծով կստեղծվեն աշխատանքային խմբեր: Այս քարտուղարությունը կաշխատի սերտ փոխգործակցությամբ մյուս կազմակերպությունների հետ, որոնք կարող են իրենց աշխատակիցներին գործուղել այնտեղ:

21. Բոլորի համար կրթության ապահովման խնդրի լուծումը կպահանջի լրացուցիչ ֆինանսական աջակցություն երկրների կողմից, ինչպես նաև կրթության նպատակների համար զարգացման ասպարեզում օգնության ավելացում և պարտքերի դուրսգրում երկկողմ և բազմակողմ դոնորների կողմից, ընդ որում, ընդհանուր պահանջվող գումարը, ըստ գնահատականների, կազմում է տարեկան մոտավորապես 8 մլրդ դոլար: Այդ կապակցությամբ խիստ կարևոր է, որ երկրների կառավարությունները, ինչպես նաև երկկողմ ու բազմակողմ դոնորները, ներառյալ Համաշխարհային բանկը և տարածաշրջանային զարգացման բանկերը, քաղաքացիական հասարակությունը և հիմնադրամները ստանձնեն նոր, որոշակի ֆինանսական պարտավորություններ:

28 ապրիլի 2000 թ.

Դակար, Սենեգալ

Կրթություն բոլորի համար. մեր ընդհանուր պարտավորությունների կատարումը

Դպրատան գործողությունների շրջանակի ընդլայնված մեկնաբանություններ

Սույն փաստաթղթում մանրամասն շարադրվում են Գործողությունների շրջանակների նախագծի բոլոր նպատակներն ու ռազմավարությունները բազմաթիվ նկատառումների հենքի վրա, որոնք ներկայացվել են կրթության համաժողովի նախաշեմին և ընթացքում, հատկապես ռազմավարությունների քննարկմանը նվիրված 24 նիստերի շրջանակներում:

Պատրաստվել են

Կրթության համաժողովի խմբագրական կոմիտեի կողմից

Փարիզ, 2000 թ. մայիսի 23

I. Նախաբան

1. Դակարի գործողությունների շրջանակը 10 տարի առաջ Ջոնտիենում Բուրի համար կրթության մասին համաշխարհային հռչակագրում շարադրված հայեցակարգի հաստատումն է: Դրանցում արտահայտվում են միջազգային հանրության ընդհանուր նվիրվածությունը լայն հենքի վրա մշակված ռազմավարության իրականացմանը՝ մեկ սերնդի կյանքի ընթացքում յուրաքանչյուր երեխայի, պատանու և չափահաս մարդու հիմնական կրթական կարիքների բավարարման և ձեռք բերված մակարդակը հետագայում պահպանելու նպատակով:

2. Դակարում անցկացված կրթության համաժողովը հնարավորություն տվեց գնահատելու անցած տասնամյակի նվաճումները, դասերն ու անհաջողությունները: ԿԲՀ 2000-ի գնահատումը աշխարհում հիմնական կրթության վիճակի վերլուծության ամենախաղեպ միջոցառումն է: Այն ներառում է 183 երկրներում Ջոնտիենի ժամանակաշրջանից ի վեր ձեռք բերված առաջընթացի ազգային գնահատումները, ծագած հիմնախնդիրների վերհանումն ու ապագա գործունեության մասին հանձնարարականների տրամադրում: Ամփոփիչ զեկույցներում ի մի են բերվում ըստ տարածաշրջանների այդ գնահատումների հիմնական եզրակացությունները: Բացի այդ, իրականացվել են 14 հատուկ թեմատիկ հետազոտություններ, ավելի քան 30 երկրներում անցկացվել են ուսուցման որակի հետազոտություններ և պատրաստվել են թեմատիկ ուսումնասիրությունների համապարփակ հավաքածու և ընդհանրացում՝ կրթության ասպարեզում գործունեությանը ՈԿԿ մասնակցության մասին:

3. Այս գնահատումը տեղեկության և վերլուծական նյութերի հարուստ աղբյուր է: ԿԲՀ հինգ տարածաշրջանային կոնֆերանսներում (Յոհանեսբուրգում՝ Սահարայից դեպի հարավ ընկած աֆրիկյան երկրների համար, Բանգկոկում՝ Ասիայի ու Խաղաղ օվկիանոսի համար, Կահիրեում՝ արաբական պետությունների և Հյուսիսային Աֆրիկայի համար, Սանտո Դոմինգոյում՝ ամերիկյան պետությունների և Կարիբյան ավազանի համար, Վարշավայում՝ Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի համար) և Ռեսիֆիում՝ ամենամեծ բնակչություն ունեցող ինը երկրների (E 9) կոնֆերանսում քննարկ-

վեցին գնահատման արդյունքները, որոնք իրենց արտացոլումը գտան տարածաշրջանային գործողությունների շրջանակներում, որոնք սույն փաստաթղթի անբաժանելի բաղադրիչն են և ընկած են Դակարի գործողությունների շրջանակի հիմքում:

4. Ջոնտիենի հայեցակարգը պահպանում է իր արդիականությունն ու գործունությունը: Այն տալիս է կրթության և յուրաքանչյուր մարդու հնարավորությունների ընդլայնման և հասարակության վերափոխման մեջ նրա վճռորոշ դերի լայն ու համապարփակ տեսլականը: Նրա կարևոր ասպեկտներից ու սկզբունքներից են. ուսուցման համընդհանուր մատչելիությունը. իրավահավասարության շեշտադրումը. ուսման արդյունքներին առանձնահատուկ ուշադրության նվիրումը. հիմնական կրթության միջոցների ու ծավալների ընդլայնումը. ուսուցման միջավայրի հարստացումը և գործընկերային կապերի ամրապնդումը: Որքան էլ ցավալի է, այս հայեցակարգը չափազանց հեռու է իրականությունից. միլիոնավոր մարդիկ դեռևս զրկված են կրթության իրենց իրավունքից և այն հնարավորություններից, որոնք այն բացում է առավել անվտանգ, առողջ, բեղմնավոր և լիարժեք կյանքի համար: Այս հիմնախնդիրը պայմանավորվում է բազմաթիվ պատճառներով՝ քաղաքական կամքի թուլությամբ, ֆինանսական ռեսուրսների պակասով և առկա միջոցների անարդյունավետ օգտագործմամբ, պարտքերի բեռով, աղքատների ու անտեսված անձանց կրթական կարիքների նկատմամբ անհամարժեք ուշադրությամբ, ուսուցման որակի նկատմամբ անբավարար ուշադրությամբ և գենդերային անհավասարության հաղթահարման գործին նվիրվածության բացակայությամբ: Անշուշտ, բոլորի համար կրթության ապահովման ճանապարհին հսկայական խոչընդոտներ են ծառայած: Եվ այնուամենայնիվ, դրանք կարող են և պետք է հաղթահարվեն:

5. Գնահատումը վկայում է ձեռք բերված առաջընթացի մասին՝ դրանով իսկ հաստատելով, որ բոլորի համար կրթությունն իրական ու հասանելի նպատակ է: Սակայն անհրաժեշտ է անկեղծորեն ընդունել, որ այս առաջընթացն անհամաչափ է և չափազանց դանդաղ: Նոր հազարամյակի շեմին ԿԲՅ 2000 գնահատումը ցույց է տալիս հետևյալը.

(i) 800 միլիոնից ավելի երեխաների մեկ երրորդից պակասը վեց տարեկանից

փոքր հասակում ընդգրկված է մանկահասակների համար կրթության այս կամ այն ձևի մեջ,

(ii) շուրջ 113 մլն երեխա, որի 60%-ը կազմում են աղջիկները, տարրական դպրոցական կրթության հնարավորություն չունեն,

(ii) նվազագույնը 880 մլն մեծահասակներ անգրագետ են, ընդ որում՝ դրանց մեծ մասը կազմում են կանայք:

6. Այս տվյալները մարտահրավեր են նետում մարդկային արժանապատությանը և մերժում կրթության իրավունքը: Դրանք վեր են հանում աղքատության վերացման և կայուն զարգացման ապահովման ճանապարհին լուրջ խոչընդոտներ, և դրանց հետ համակերպվելն անհնար է:

7. Դակարի շրջանակում սահմանվում են ԿԲՅ վեց խոշոր նպատակներ և առաջարկվում 12 հիմնական ռազմավարություններ: Այս 12 հիմնական ռազմավարությունները հիմնվում են անցած տասնամյակի փորձի վրա և հաշվի են առնում փոփոխվող գլոբալ միջավայրը: Դրանք ներառում են կրթության բնագավառում միջազգային զարգացման նպատակները, որոնց նվիրվածությունն արդեն իսկ հաստատվել է ազգային կառավարությունների և միջազգային հանրության կողմից:

8. XXI դարում սովորողներին ամենավաղ տարիքից և ողջ կյանքի ընթացքում կպահանջվի որակյալ կրթության հնարավորությունների մատչելիություն, որը համապատասխանում է նրանց կարիքներին, ունի արդարացի բնույթ և հաշվի է առնում գենդերային ասպեկտները: Այս հնարավորությունները չպետք է կերպափոխվեն ո՛չ օտարացումով, ո՛չ խտրականությամբ: Քանի որ ուսուցման տեմպերը, ոճը, լեզուն և պայմանները երբեք միակերպ չեն լինի բոլորի համար, պետք է գոյություն ունենան տարբեր ֆորմալ կամ նվազ ֆորմալ մոտեցումներ այն չափով, ինչ չափով դրանք ապահովում են լուրջ ուսուցում և սովորողների իրավահավասար վիճակ:

9. Կրթության իրավունքը պետության վրա դնում է իր բոլոր քաղաքացիներին

հիմնական ուսուցման ասպարեզում իրենց կարիքները բավարարելու հնարավորություններով ապահովելու պարտավորություն: Տարրական կրթությունը պետք է լինի անվճար, պարտադիր և որակյալ: Վաղվա օրվա կրթության համակարգերը իրենց ողջ հնարավոր բազմազանությամբ պետք է լինեն թափանցիկ ու հաշվետու՝ կրթությունը ղեկավարելու և կառավարելու բնույթի ու նրա ֆինանսավորման առումով: Կրթության ոլորտում պետության պարտադիր դերը պետք է լրացվի և ամրապնդվի կրթական գործունեության գործընկերների հետ ամուր և համապարփակ կապերով հասարակության բոլոր մակարդակներում: Բոլորի համար կրթությունը ենթադրում է կրթության գործին համընդհանուր մասնակցություն և նվիրվածություն:

II. Ձեռքբերումներ և խնդիրներ

Ձեռքբերումներ և դասեր

10. Ազգային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում անցկացված ԿԲԶ 2000 գնահատումը վկայում է Ջոնտիենի հռչակագրում արտացոլված հայեցակարգի շրջանակներում անցած տասնամյակի ընթացքում ձեռք բերված առաջընթացի մասին:

11. Աշխարհում 1990 թվականից տարրական դպրոցի սովորողների թիվն ավելացել է գրեթե 82 մլն մարդով, ընդ որում, 1998 թ. դպրոցներում հաշվվում էր 44 մլն աղջիկ ավելի, քան 1990 թ.: Այս տվյալները առավել, քան այլ ցուցանիշներ, վկայում են ի հեճուկս ծառայած և հաճախ լուրջ տնտեսական դժվարություններին և բնակչության շարունակվող արագ աճին՝ բազմաթիվ երկրների լուրջ ջանքերի մասին: 1990-ական թվականների վերջին զարգացող երկրները ընդհանուր առմամբ հասել են դպրոց ընդունելու զուտ ցուցանիշների 80%-ից բարձր մակարդակի: Նվազել են երկտարեցիության և մաղվելու ցուցանիշները: Ձեռք է բերվել գեներային հավասարության վիճակի որոշ, թեկուզև սահմանափակ բարելավում՝ բազմաթիվ տարածաշրջաններում տարրական կրթության մեջ ներգրավման առումով՝ բացառությամբ Աֆրիկայի՝ Սահարայից դեպի հարավ, որը զարմանալի բացառություն է: Մանկահասակ երեխաների խնամքը և նրանց դաստիարակությունը ընդլայնվել են աննշան և հիմնականում քաղաքային շրջաններում: Փաստորեն աշխարհի բոլոր երկրները վավերացրել են Միավորված ազգերի կազմակերպության երեխայի իրավունքների մասին կոնվենցիան և դրանով իսկ ընդունել են յուրաքանչյուր երեխայի՝ հիմնական կրթության իրավունքի ապահովման պարտավորությունը: Նկատվում է ոչ ֆորմալ կրթության և հմտությունների տիրապետման ասպարեզում պատրաստության աստիճանական աճ: Թեպետ անգրագիտության մակարդակը մնում է չափազանց բարձր, այս ասպարեզում նույնպես ձեռք է բերվել նկատելի առաջընթաց: Մեծահասակների գրագիտության ընդհանուր մակարդակը բարձրացել է մինչև 85% տղամարդկանց և

74% կանանց շրջանում: Կրթության բարձրացող մակարդակը հնարավորություն է տալիս տղամարդկանց ու կանանց առավել իրազեկված որոշում կայացնելու ընտանիքի մեծության մասին: Սա անդրադառնում է ժողովրդագրական աճի տեմպերի վրա, որը կարևոր գործոն է թե՛ կրթության և թե՛ զարգացման համար:

12. Այս քանակական ցուցանիշները ոչինչ չեն ասում միլիոնավոր մարդկանց աղետալի վիճակի մասին, որոնք դեռևս զրկված են կրթությունից, կամ ընչազուրկ երիտասարդների մասին՝ իրենց տեղը գտնելու և փոփոխվող հասարակությունում սեփական արժեքների պահպանման համար մղվող ծանր պայքարում: Գոյություն ունեն նաև կցկտուր տվյալներ դասավանդման և ուսուցման բնույթի ու որակի և կրթության համակարգերի բոլոր մակարդակներում ուսուցման արդյունքների մասին:

13. Նկատվում է սերտ փոխկախվածություն կրթության մեջ ներգրավվածների ցածր մակարդակի, բարձր մաղվածության և ուսուցման անբավարար արդյունքների ու աղքատության մակարդակի միջև: Սակայն Ջոնտիենից հետո տասը տարվա ընթացքում կուտակված փորձը վկայում է այն մասին, որ բոլորի համար կրթության նպատակի իրականացման ճանապարհին էական առաջընթաց հնարավոր է ձեռք բերել ամուր քաղաքական նվիրվածության առկայությամբ, որն ամրապնդվում է քաղաքացիական հասարակության հետ նոր գործընկերային կապերով և ֆինանսավորող հաստատությունների կողմից առավել նպատակասլաց աջակցությամբ: Ակնհայտ է նաև, որ կրթության բարիքներից տղաների ու աղջիկների հավասարաչափ օգտվելու ապահովման խնդիրը պահանջում է գենդերային հավասարության հիմնախնդիրների պարտադիր հաշվառում ոլորտային քաղաքականություն և ռազմավարություն մշակելիս ու իրականացնելիս: Ակնհայտ է նաև ազգային և ենթաազգային մակարդակում ըստ գենդերային կատեգորիաների բաժանված հավաստի տվյալներ հավաքելու և մանրամասն վերլուծելու կարևորությունը:

14. Ներկայումս առավել հասկանալի են դարձել կրթության պահանջարկը որոշող բազմաթիվ գործոններ, ինչպես նաև երեխաներին, երիտասարդներին ու մեծա-

հասակներին ուսուցման հնարավորություններից զրկող բազմաթիվ պատճառներ: Մեծ ուշադրություն է նվիրվում մի շարք միջոցառումների, որոնք անհրաժեշտ են դպրոցական կրթության մեջ աղջիկներին ավելի լայնորեն ներգրավելու և նրանց մաղվելու դեմ պայքարի համար:

Ընդլայնվել են դասավանդողների և այլ մանկավարժների աշխատանքի արդյունավետության, համապատասխան ուսումնական նյութերի կարևոր դերի, «հին» ու «նոր» տեխնոլոգիաների զուգակցման անհրաժեշտության մասին պատկերացումները՝ հաշվի անելով որոշակի իրավիճակը, տարրական գրագիտության ապահովման և դպրոցական կյանքի ու այլ կրթական ծրագրերի վրա համայնքի լուրջ ազդեցության համար տեղական լեզուների մեծ նշանակությունը: Ավելի շատ ուշադրություն և ըմբռնում է դրսևորվում մանկահասակ երեխաների խնամքի ու նրանց դաստիարակության կարևորության նկատմամբ՝ հետագա հաջող դպրոցական ուսուցման ու կրթության տարբեր ենթալորտների, ինչպես նաև հիմնական կրթության, առողջապահության, սննդի և ջրային ռեսուրսների ու բնական միջավայրի անվտանգության միջև ամուր փոխադարձ կապերի անհրաժեշտության համար:

Խնդիրներ և հնարավորություններ

15. Անցած տասնամյակի շոշափելի, սակայն համեստ ընդհանուր ձեռքբերումները այնուամենայնիվ պետք է մտահոգության տեղիք տան: Բազմաթիվ երկրների առջև նախկինի պես ծառայած են արագ փոփոխվող աշխարհի համատեքստում հիմնական կրթության նշանակության, նպատակի և բովանդակության որոշման, ինչպես նաև ուսուցման արդյունքների և ուսման առաջադիմության գնահատման խնդիրները: Դեռևս բացակայում է կրթության բազմաթիվ որակական և ոչ ֆորմալ կողմերի հստակ գնահատումը: Իրավիճակների հսկայական բազմազանության պայմաններում դժվար է գնահատել և համադրել գործունեության արդյունավետությունն ու արգասավորությունը: Ավելին՝ լուրջ տագնապի տեղիք է տալիս թե՛ երկրների ներսում և թե՛ նրանց միջև կրթության ասպարեզում աճող տարբերությունները:

16. Բազմաթիվ կառավարություններ և հաստատություններ իրենց ջանքերը կենտրոնացնում են նրանց վրա, ում հեշտ է ներգրավել ուսման մեջ, և անուշադրության են մատնում նրանց, ովքեր դուրս են մղված հիմնական կրթությունից սոցիալական, տնտեսական կամ աշխարհագրական պատճառներով: Ակնհայտ է, որ մատչելիության ընդլայնումը չպետք է ի վնաս որակի լինի, և որ որակի բարձրացումը չպետք է իրականացվի ի շահ տնտեսապես ապահովված շերտերի՝ աղքատության հաշվին, ինչպես լինում է, օրինակ՝ մանկահասակ երեխաների խնամքի ու նրանց դաստիարակության նկատմամբ:

17. Աղջիկների կրթությունն առաջվա պես մնում է լուրջ խնդիր. չնայած միջազգային մակարդակում դրան հատկացվող ուշադրությանը՝ աղջիկները կազմում են տարրական կրթության հնարավորությունից զրկված բոլոր երեխաների 60%-ը:

18. Իրավիճակը Հարավային Ասիայում և Աֆրիկայում՝ Սահարայից դեպի հարավ ընկած, որտեղ առավել դժվար է առաջընթացի հասնել, ակնհայտորեն ավելի բարդ հիմնախնդիր է ներկայացնում, քան միջին աշխարհում, և իր նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունք է պահանջում՝ յուրաքանչյուր երկրում ի շահ բոլորի համար կրթության նպատակներին հասնելու: Եկամուտների անհավասարության պատճառով ամերիկյան պետություններում և Կարիբյան ավազանում տարածաշրջանների ու սոցիալական խմբերի միջև խոր տարբերությունները նախկինի պես արգելակում են բոլորի համար կրթություն ապահովելու գործում առաջընթացը և պատշաճ ուշադրության կարիք ունեն:

19. Կարևոր խնդիր է ապահովել, որ բոլորի համար կրթության լայն տեսլականը՝ որպես համապարփակ հայեցակարգ, արտացոլվի ազգային կառավարությունների և ֆինանսական հաստատությունների քաղաքականությունում: Բոլորի համար կրթությունը պետք է ընդգրկի ոչ միայն տարրական դպրոցը, այլ նաև մանկահասակ երեխաների դաստիարակության, գրագիտության տարածման և կենսական հմտությունների ուսուցման ծրագրերը: Հիմնվելով թե ֆորմալ և թե ոչ ֆորմալ մոտեցումների վրա՝ այն պետք է հաշվի առնի աղքատ և առավել ընչազուրկ մարդկանց կարիքները,

ներառյալ աշխատող երեխաներին, մեկուսացված գյուղական շրջանների բնակիչներին և քոչվորներին, ինչպես նաև էթնիկական և լեզվական փոքրամասնությունների ներկայացուցիչներին. հակամարտություններից, ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ից, քաղցից և թույլ առողջությունից տուժած երեխաներին, երիտասարդներին և մեծահասակներին, ինչպես նաև հատուկ կրթական կարիքներ ունեցող անձանց: Ոգևորում է այն փաստը, որ բազմաթիվ կառավարություններ, ֆինանսավորող հաստատություններ և քաղաքացիական հասարակության կազմակերպություններ ավելի լայնորեն են պայքարում կրթության առավել համապարփակ և համալիր հայեցակարգի համար:

20. Առաջնահերթ խնդիր է ապահովել, որ բոլորի համար կրթությանը հատկացվեն պատշաճ ռեսուրսներ արդարացի և կայուն հենքի վրա: Բազմաթիվ կառավարություններ իրենց ազգային բյուջեներում կրթությանը չեն նվիրում բավարար առաջնահերթ ուշադրություն: Նրանցից շատ-շատերը չեն ապահովում կրթության համար ռեսուրսների արդյունավետ ու գործուն օգտագործում և հաճախ սուբսիդավորում են բնակչության առավել ապահովված խմբերին՝ ի վնաս աղքատության: Միաժամանակ կայունացման ծրագրերի շրջանակներում կրթությանը հատկացվող բյուջեները հաճախ լինում են չպաշտպանված: Սրա ուղղակի հետևանքն այն է, որ օգտագործողներից հավաքվող միջոցները առաջվա պես ծառայում են խոշոր զսպող գործոն աղքատ ընտանիքների երեխաների, ինչպես նաև ոչ ֆորմալ ուսուցման կարիք ունեցող երիտասարդների և մեծահասակների դպրոց հաճախելու համար: Որոշ երկրներում ծախսերի բեռը սակավ ապահովված ծնողների ուսերին բարդելը աղետալիորեն արտահայտվում է սովորողներին հավաքագրելու և նրանց դպրոցում ընդգրկելու վրա: Կրթությունը չպետք է ծնունդ տա ո՛չ օտարացման, ո՛չ խտրականության: Յուրաքանչյուր կառավարության վրա ընկած է անվճար և որակյալ հիմնական կրթության ապահովման պարտավորությունը, որպեսզի ոչ մի երեխա զրկված չլինի ուսումից՝ դրա համար վճարելու անհնարինության պատճառով:

21. Կառավարությունները պետք է ավելի ակտիվորեն փնտրեն ռեսուրսների ընդլայնման այլընտրանքային և նորարարական ուղիներ՝ հիմնական կրթությանը սատարելու համար և մշակեն հստակ սահմանված ռազմավարություններ, որոնց հաս-

նելուն նրանք պետք է անկեղծ նվիրված լինեն: Աղքատ երկրների պարտքի բեռի թեթևացումը առաջվա պես մնում է ոչ համարժեք, քանի որ միջոցների չափից ավելի աննշան ծավալը տրամադրվում է չափից ավելի քիչ երկրների և չափազանց ուշ: Անհրաժեշտ է, որ պարտքերի կրճատման ծրագրերը կառավարություններին հնարավորություն տան բարձրացնելու կրթության առաջնահերթությունը աղքատության նվազեցման պայքարի ընդհանուր շրջանակներում:

22. Թեև 1990-ական թվականներին բարձրացել է հիմնական կրթությանը ցույց տրվող միջազգային օգնության մասնաբաժինը, միաժամանակ նկատվել է օգնության ընդհանուր անկում ընդհանուր առմամբ զարգացման կարիքների համար: Նշված միտումներից առաջինն աջակցության կարիք ունի, իսկ երկրորդը հարկ է հետ շրջել: Միջազգային հանրությունը, գործելով համագործակցության և հաշվետվողականության հենքի վրա, միանգամայն կարող է ի ցույց դնել, որ ինքը կարող է արդյունավետ աջակցել մանրամասն մշակված ազգային ոլորտային ռազմավարություններին և օգնել զգալի լրացուցիչ ռեսուրսներ հատկացնելուն, որոնք պատրաստ են տրամադրել բազմաթիվ ֆինանսական հաստատություններ:

23. Ջարգացման առավել լայն համատեքստում ծնունդ առնող աշխատանքի նոր մեթոդները նույնպես բացում են ԿԲՀ նպատակներին հասնելու համար հնարավորություններ: Երկրների մակարդակում ազգային և միջազգային հաստատությունների միջև առավել լայն համագործակցությունը այնպիսի կառույցների ու մեխանիզմների միջոցով, ինչպիսիք են Ջարգացման համապարփակ շրջանակները, աղքատության նվազեցման ռազմավարական ծրագրերը և ՄԱԿ-ի զարգացման նպատակներով օգնություն ցույց տալու շրջանակային ծրագիրը, բացում է գործընկերության հնարավորություններ հիմնական կրթության համար ռեսուրսներ գտնելու վերաբերյալ:

24. Մասնակցության ոգով իրական զարգացումը ամենայն հավանականությամբ կարող է ապահովված լինել այնտեղ, որտեղ կրթությունն առավել հաստատակամորեն և վճռականորեն ճանաչվել է որպես մարդու հիմնական իրավունքներից մեկը, և

որտեղ արմատավորվել է ներկայացուցչական ժողովրդավարությունը: Աղքատության գնահատման և բնակչության մասնակցությամբ ընտանիքների հետազոտությունների աճող նշանակությունը նույնպես վկայում է կրթության ծրագրերի և համակարգերի զարգացման դրական միտման մասին, որոնք իրապես համապատասխանում են հստակ սահմանված կարիքներին ու առաջնահերթություններին:

25. Թեպետ անհամարժեք կազմակերպական ներուժը և քաղաքական գործընթացների թուլությունը դեռևս խանգարում են բազմաթիվ կառավարություններին արձագանքելու իրենց քաղաքացիների առաջնահերթություններին, այնուամենայնիվ աշխարհում ժողովրդավարության սկզբունքների տարածումը, ժողովրդավարական գործընթացներում քաղաքացիական հասարակության աճող ներդրումը, կոռուպցիայի դեմ պայքարը և բազմաթիվ երկրներում նկատվող ապակենտրոնացման գործընթացը կարող են զգալի օժանդակություն տրամադրել արդյունավետ, իրավահավասար և կայուն՝ բոլորի համար կրթության ապահովման համար ամուր հենքի ձևավորմանը:

26. Գլոբալացումը բացում է նոր հնարավորություններ և առաջ քաշում նոր հիմնախնդիրներ: Այն մի գործընթաց է, որը կարիք ունի ձևավորման ու կարգավորման՝ իրավահավասարության և կայունության ապահովման նպատակներով: Գլոբալացումը ծնում է նոր հարստություններ և հանգեցնում տնտեսությունների և հասարակությունների փոխկապվածության և փոխկախվածության բարձրացման: Այն տեղի է ունենում տեղեկատվական տեխնոլոգիաների ասպարեզում հեղափոխության և կապիտալի շարժունության բարձրացման ներգործությամբ և կարող է օժանդակել աշխարհում աղքատության ու անհավասարության նվազեցմանը, ինչպես նաև ի շահ հիմնական կրթության նոր տեխնոլոգիաների օգտագործմանը: Այդուհանդերձ, գլոբալացումը հղի է գիտելիքների շուկայի ստեղծման վտանգով, որից դուրս կմղվեն աղքատներն ու ընչազուրկները: Գլոբալ տնտեսության պայմաններում, որն ավելի ու ավելի է հիմնվում գիտելիքների վրա, երկրները և հիմնական կրթություն ստանալու հնարավորությունից զրկված ընտանիքները բախվում են առավել բարգավաճող միջազգային տնտեսության պայմաններում խորացող մարգինալացման հեռանկարին:

27. Լուրջ խնդիր է ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի ազդեցության սպառնալիքը ԿԲՅ նպատակներին հասնելու և ավելի լայն իմաստով զարգացման վրա, հատկապես Սահարայից դեպի հարավ ընկած աֆրիկյան երկրներում: ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի սարսափելի ներգործությունը կրթության պահանջարկի, առաջարկի և որակի վրա հարկ է կոնկրետ և անհապաղ հաշվի անել ազգային մակարդակում քաղաքականության իրականացման և ծրագրման ընթացքում: Այդ վարակի տարածման սահմանափակման և կրճատման ծրագրերի շրջանակներում հարկ է առավելագույնս օգտագործել կրթության ներուժը՝ կապված կանխարգելիչ միջոցների մասին տեղեկատվության տարածման և մոտեցումների ու վարքագծային կողմնորոշումների փոփոխության հետ:

28. Մեծ մտահոգության տեղիք է տալիս լարվածության, հակամարտությունների և պատերազմների զգալի տարածումը թե՛ երկրների ներսում և թե՛ պետությունների ու ժողովուրդների միջև: Կրթությունը պետք է կարևոր դեր խաղա ապագայում հակամարտությունների կանխման և հաստատուն խաղաղության և կայունության ապահովման մեջ:

III. Նպատակներ

«Հիմնական կրթական կարիքները ... ընդգրկում են թե՛ հմտությունների անհրաժեշտ ծավալը... և թե՛ ուսուցման հիմնական բովանդակությունը..., որոնք անհրաժեշտ են մարդկանց գոյատևելու, իրենց բոլոր ունակությունները զարգացնելու, գոյության և մարդկային արժանապատվության պահպանման պայմաններում աշխատանքի, զարգացման մեջ, իր կյանքի որակի բարձրացման, համակողմանիորեն կշռադատված որոշումների ընդունման և կրթության շարունակման մեջ համակողմանի մասնակցության համար» (Բոլորի համար կրթության համաշխարհային հռչակագիր, հոդված 1, կետ 1):

29. Ստորև շարադրված նպատակներն ու ռազմավարությունները ներկայացնում են Գործողությունների շրջանակը, որոնք մշակվել են բոլոր անձանց հնարավորություն ընձեռելու իրացնելու ուսուցման իրենց իրավունքը և կատարելու հասարակության զարգացման գործում ներդրում ապահովելու իրենց պարտավորությունը: Այս գլոբալ նպատակներն ու ռազմավարությունները ձևակերպված են՝ հաշվի առնելով ԿԲՀ տարածաշրջանային կոնֆերանսների աշխատանքի արդյունքները և արդեն իսկ միջազգային մակարդակով սահմանված զարգացման ասպարեզում խնդիրների լուծման երկրների ստանձնած պարտավորությունները: Կրթությանն առնչվող բոլոր շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցելով և ողջ համաշխարհային հանրության և ԿԲՀ ասպարեզում որոշումների իրականացման մեխանիզմների օգնությամբ առանձին վերցրած երկրները պետք է որոշեն իրենց սեփական նպատակները, միջանկյալ խնդիրները և ժամկետները կրթության արդեն գոյություն ունեցող կամ նոր ազգային ծրագրերի շրջանակներում:

1 Մանկահասակ երեխաների խնամքի և նրանց դաստիարակության, հատկապես առավել խոցելի և ընչազուրկ երեխաների, համալիր միջոցառումների ընդլայնում և կատարելագործում

30. Բոլոր մանկահասակ երեխաները պետք է դաստիարակվեն անվտանգության և հոգածության պայմաններում, որպեսզի նրանցից մեծանան առողջ, խելա-

ցի և պաշտպանված մարդիկ, ովքեր կարողանում են սովորել: Վերջին տասը տարիների ընթացքում ստացվել են նոր ապացույցներ, որ մանկահասակ երեխաների խնամքի ու նրանց դաստիարակության բարձր որակի ապահովումը թե՛ ընտանիքի և թե՛ հատուկ մշակված ծրագրերի շրջանակներում դրական են անդրադարձնում երեխաների գոյատևելու, աճի ու զարգացման և ուսուցման նկատմամբ նրանց ունակությունների վրա: Նման ծրագրերը պետք է լինեն համալիր՝ ուշադրություն դարձնելով երեխայի բոլոր կարիքներին, ներառյալ առողջությունը, սնունդն ու հիգիենան, ինչպես նաև ճանաչողական (կոգնիտիվ) ու հոգեբանական զարգացումը: Նման ծրագրերի իրականացումը պետք է հիմնվի երեխայի մայրենի լեզվի օգտագործման վրա, օժանդակի հատուկ կարիքներ ունեցող երեխաների հայտնաբերմանը և կատարելագործի նրանց խնամքի ու դաստիարակության միջոցները: Երեխաների լավ խնամքի և նրանց լավ դաստիարակության ապահովմանը, հատկապես երբ խոսքը նրանցից առավել ընչազուրկների մասին է, կարող է նպաստել կառավարության, ՈԿԿ, հասարակության և ընտանիքի միջև գործընկերային հարաբերությունների հաստատումը՝ երեխային ու նրա ընտանիքին ուղղված միջոցառումների իրականացման շրջանակներում, որոնք հենվում են տեղական համայնքի վրա և վայելում են ազգային բազմաոլորտային քաղաքականության աջակցությունը և ամրապնդված են համապատասխան ռեսուրսներով:

31. Կառավարությունները՝ ի դեմս իրենց համապատասխան նախարարությունների, հիմնական պատասխանատվություն են կրում ԿԲՅ ասպարեզում ազգային ծրագրերի շրջանակներում մանկահասակ երեխաների խնամքի ու նրանց դաստիարակության քաղաքականության մշակման, քաղաքական շրջանակների և բնակչության կողմից համապատասխան աջակցության ապահովման և մանկահասակ երեխաների համար ճկուն, հարմարեցման ենթակա ծրագրերի ներդրման համար, որոնք հատուկ նախատեսված են նրանց տարիքի համար, այլ ոչ թե կրկնում են սովորական դպրոցական համակարգերը՝ դրանք փոխադրելով ավելի փոքր տարիքի երեխաների վրա: Այս նպատակին հասնելու աշխատանքի կարևոր տարրերից են ծնողներին և երեխաներին խնամող մյուս անձանց՝ երեխայի խնամքի առավել արդ-

յունավետ մեթոդների ուսուցումը, ավանդական պրակտիկայի հաշվառումը և մանկահասակ երեխաների առնչությամբ իրավիճակը բնութագրող ցուցանիշների կանոնավոր օգտագործումը:

2 Ապահովել, որ 2015 թվականին բոլոր երեխաները, հատկապես աղջիկները, անբարենպաստ միջավայրից ու էթնիկական փոքրամասնությունների երեխաները կարողանան ազատորեն ստանալ անվճար և պարտադիր որակյալ տարրական կրթություն

32. Բոլոր երեխաները պետք է հնարավորություն ունենան իրացնելու դպրոցներում կամ այլընտրանքային ծրագրերի շրջանակներում որակյալ կրթության իրենց իրավունքը այն մակարդակով, որը համարվում է «հիմնական»: Բոլոր պետությունները պետք է կատարեն անվճար և պարտադիր տարրական կրթության ապահովման իրենց պարտավորությունը՝ Միավորված ազգերի կազմակերպության Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային և այլ միջազգային պարտավորություններին համապատասխան: Մինչև 2015 թվականը համընդհանուր տարրական կրթության (ՅՏԿ) ապահովման մասին միջազգային պայմանավորվածության իրականացումը բոլոր երկրներում անհնար կլինի առանց այս նպատակին նվիրվածության և պետական կառավարման բոլոր մակարդակներում համապատասխան քաղաքական կամքի առկայության: Աղքատության մեջ ապրող և բազմաթիվ զրկանքներից տանջվող միլիոնավոր երեխաների նկատմամբ պետք է գործի ուսման վարձի և դրա հետ կապված այլ դրամահավաքների բացակայության սկզբունքին անսասան նվիրվածությունը. պետք է նաև ձեռնարկվեն ամեն կարգի հնարավոր միջոցներ այնպիսի ծախսերի նվազեցման կամ վերացման համար, ինչպիսիք են ուսումնական նյութերի, դպրոցական համազգեստի, դպրոցական սննդի և դպրոցական տրանսպորտի համար ծախսերը: Դպրոց հաճախելու հետ կապված անուղղակի այլընտրանքային ծախսերի նվազեցման համար հարկ է օգտվել սոցիալական քաղաքականությունից, սոցիալական պաշտպանության և սոցիալական աջակցության ծրագրերից: Ոչ ոք չպետք է զրկված լինի ֆինանսական միջոցների բացակայության պատճառով լրիվ որակյալ

տարրական կրթություն ստանալու հնարավորությունից: Կրթություն ստանալու ճանապարհին չպետք է ծառանա նաև երեխայի աշխատանքը: Մինչև 2015 թ. ՀՀ Կրթության և գիտության նախարարության անբաժանելի մասը պետք է լինի հատուկ կարիքներ ունեցող երեխաներին, էթնիկական փոքրամասնությունների, անբարենպաստ պայմաններում ապրող, միգրանտների ընտանիքների, հեռավոր և մեկուսացված շրջաններից և քաղաքի հետնախորշերից երեխաներին, ինչպես նաև կրթության հնարավորությունից զրկված բոլոր մյուս երեխաներին տարրական կրթության համակարգում ընդգրկելը:

33. Թեպետ հիմնական կրթությամբ համընդհանուր ընդգրկման ապահովման պարտավորությունը հիմնականն է, չպետք է մոռանալ նաև այն մասին, որ ուսուցման ասպարեզում գործուն արդյունքների հասնելու համար հավասարապես կարևոր են այդ կրթության որակը բարձրացնելը և պատշաճ մակարդակի վրա պահելը: Բնակչության մարզինալացված և օտարացած խմբերից երեխաներին զրավելու և պահելու հնարավորություն ունենալու համար կրթական համակարգերը պետք է գործեն անհրաժեշտ ճկունությամբ՝ ապահովելով համապատասխան ուսումնական մյուսի մատուցումը մատչելի և հետաքրքրաշարժ ձևով: Կրթական համակարգերը պետք է համապարփակ լինեն՝ ակտիվորեն զբաղվելով դպրոցներում չգրանցված երեխաներին փնտրելով և ճկունորեն արձագանքելով առանձնահատուկ հանգամանքներին և բոլոր սովորողների կարիքներին: ԿԲՀ 2000-ի գնահատման փաստաթղթերում առաջարկվում է միջոցների լայն շրջան, որոնց օգնությամբ դպրոցները կարող են բավարարել իրենց աշակերտների կարիքները: Դրանց թվին են դասվում աղջիկների համար դրական գործողությունների ծրագրերը, որոնք հետապնդում են աղջիկների դպրոց հաճախելուն խանգարող խոչընդոտները վերացնելու նպատակ, էթնիկական փոքրամասնությունների երեխաների համար երկլեզվյան կրթություն և հնարամտությամբ ու բազմազանությամբ աչքի ընկնող մի շարք այլ մոտեցումներ, որոնք հնարավորություն են տալիս բացահայտելու դպրոցում չընդգրկված երեխաներին և նրանց հետ ակտիվորեն աշխատելու:

3 Ապահովել, որ բոլոր երիտասարդների և մեծահասակների կրթական կարիքները բավարարվեն ուսուցման և կենսական հմտությունների ձեռքբերման համապատասխան ծրագրերին հավասար մատչելիության հենքի վրա

34. Բոլոր երիտասարդներին և մեծահասակներին պետք է տրամադրվի գիտելիքներ ստանալու և արժեքային պատկերացումները, սոցիալական կողմնորոշումներն ու մասնագիտական հմտությունները զարգացնելու հնարավորություն, որոնք հետագայում նրանց թույլ կտան ընդլայնելու աշխատանքի իրենց հնարավորությունները, համակողմանիորեն մասնակցելու իրենց հասարակության կյանքին և շարունակելու սովորել: Ոչ մի երկիր չի կարող ստեղծել ժամանակակից և բաց տնտեսություն, եթե այդ երկրում աշխատուժի որոշակի մասը չունենա լրիվ միջնակարգ կրթություն: Երկրների մեծ մասում սա պահանջում է միջնակարգ կրթության համակարգի ընդլայնում:

35. Երիտասարդները և, հատկապես, աղջիկները, իրենց կյանքում բախվում են վտանգների ու սպառնալիքների, որոնք սահմանափակում են սովորելու նրանց հնարավորությունը և լուրջ հիմնախնդիր են կրթության համակարգերի համար: Այս գործոններից են շահագործողական աշխատանքը, գործազրկությունը, հակամարտությունները և բռնությունը, թմրամիջոցների չարաշահումը, դպրոցական տարիքում հղիությունը և ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ը: Ամենուրեք անհրաժեշտ են երիտասարդների համար հատուկ նախատեսված ծրագրեր, որոնք հնարավորություն կտան երիտասարդությանը ստանալու այս վտանգներից պաշտպանվելու համար անհրաժեշտ տեղեկատվություն, հմտություններ, խորհուրդներ և ծառայություններ:

36. Բոլոր երիտասարդներին պետք է ընձեռվի կրթությունը շարունակելու հնարավորություն: Նրանց համար, ով թողել է դպրոցը կամ էլ ավարտել է այն՝ այդպես էլ չուրացնելով գրաճանաչություն, հաշվելու հմտություններ և անհրաժեշտ կենսական հմտություններ, պետք է նախատեսվեն ուսումը շարունակելու մի շարք տարբեր մեխանիզմներ: Նման մեխանիզմները պետք է ունենան գործնական ուղղվածություն, հաշ-

վի առնեն կյանքի պայմանները և սովորողների կարիքները, օգնեն նրանց դառնալու իրենց ապագայի ակտիվ կերտողներ և զարգացնել նրանց մեջ աշխատանքի համար օգտակար հմտություններ:

4 Մինչև 2015 թ. 50%-ով բարձրացնել մեծահասակների, հատկապես կանանց, գրագիտության մակարդակը և բոլոր մեծահասակներին հիմնական և շարունակական կրթության հավասար հնարավորություն ընձեռել

37. Բոլոր մեծահասակները պետք է օժտված լինեն հիմնական կրթություն ստանալու իրավունքով (նախևառաջ գրագիտություն տվող), որը նրանց հնարավորություն կտար իրենց ապրած աշխարհում ակտիվ և գործուն դեր խաղալու: Այսօր աշխարհում նախկինի պես հաշվվում է շուրջ 880 մլն մարդ, ովքեր չեն կարողանում գրել և կարդալ, ընդ որում՝ նրանց երկու երրորդը կանայք են: Խնդիրը բարդանում է նրանով, որ բազում մարդկանց մոտ դեռ նոր յուրացրած գրաճանաչության մակարդակը բավական անկայուն է: Եվ այդուհանդերձ, մեծահասակների կրթության խնդիրը շարունակում է դիտվել որպես մասնավոր, կրթության ազգային համակարգերի և բյուջեների շրջանակներում դրան հաճախ նվիրվում է ոչ առաջնահերթ ուշադրություն:

38. Մեծահասակների կրթության և շարունակական կրթության համակարգերը պետք է զգալիորեն ընդլայնվեն, բազմազան դարձվեն և ներառվեն կրթության և աղքատության նվազեցման ազգային ռազմավարությունների հիմնական հարցերի թվում: Պետք է ավելի լայն ճանաչում գտնի գրագիտության դերը ողջ կյանքի ընթացքում ուսուցման ապահովման, կայուն աշխատավարձի, լավ առողջության, ակտիվ քաղաքացիական դիրքորոշման և մարդու, համայնքի ու ընդհանուր առմամբ ողջ հասարակության կյանքի որակի բարելավման գործում: Գրագիտությունն ու մշտական կրթությունը համարվում են կանանց հնարավորությունների ընդլայնման և սեռերի հավասարության ապահովման կարևորագույն նախապայմաններից: Մեծահասակների բազմազան կարիքները և նրանց կյանքի տարբեր հանգամանքները հաշվի

առնելու համար անհրաժեշտ է ամրապնդել ուսուցման ֆորմալ, ոչ ֆորմալ և ոչ պաշտոնական համակարգերի միջև կապերը:

39. Այս ասպարեզում գործունեության զարգացման համար պահանջվում են համապատասխան ռեսուրսներ, անգրագիտության վերացման ճիշտ կողմնորոշված ծրագրեր, առավել պատրաստված ուսուցիչներ և ստեղծագործական մոտեցում տեխնոլոգիաների օգտագործման նկատմամբ: Առանձնահատուկ նշանակություն ունի ոչ կառավարական կազմակերպությունների մշակած ուսումնական մեթոդիկաների ներդրումը, որոնք ունեն գործնական ուղղվածություն, ապահովում են բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությունն այս գործընթացին և անգրագիտության վերացումը շաղկապում են մարդու հնարավորությունների ընդլայնման և տեղական մակարդակով զարգացման գործընթացի հետ: Առաջիկա տասնամյակում մեծահասակների կրթության գծով աշխատանքի հաջողության չափանիշ պետք է լինի գլխավորապես տղամարդկանց և կանանց ու քաղաքի և գյուղի բնակչության միջև գոյություն ունեցող գրագիտության մակարդակի ցուցանիշների միջև խզման էական կրճատումը:

5 Մինչև 2015 թվականը տարրական և միջնակարգ կրթության մեջ գենդերային տարբերությունների վերացումը և 2015 թ. կրթության ոլորտում սեռերի հավասարության հասնելը՝ առանձնահատուկ ուշադրություն նվիրելով աղջիկներին որակյալ հիմնական կրթության և ուսման լավ առաջադիմության ապահովման համար լիարժեք և հավասար հնարավորության տրամադրմանը

40. Սեռի հատկանիշով խտրականությունը կրթության իրավունքի իրականացման ճանապարհին առավել դժվար հաղթահարվող խոչընդոտներից մեկն է: Եթե այս խոչընդոտը չհաղթահարվի, ապա բոլոր համար կրթությունը չի ապահովվի: Աղջիկները կազմում են դպրոց չհաճախող երեխաների ու երիտասարդների մեծ մասը, թեպետ ավելի ու ավելի շատ երկրներում անբարենպաստ վիճակում են հայտնվում տղաները: Աղջիկների ու կանանց կրթությունը սերունդների ժառանգորդության

ապահովման հզոր գործիք է և սոցիալական զարգացման ու կանանց հնարավորությունների ընդլայնման վճռորոշ գործոն, սակայն աղջիկներին հիմնական կրթության մեջ ավելի լայնորեն ընդգրկելու խնդրի լուծման մեջ առայժմ նկատվում են սոսկ սահմանափակ հաջողություններ:

41. Այսօր արդեն ձեռք է բերվել մինչև 2005 թ. տարրական և միջնակարգ կրթության մեջ գենդերային տարբերությունների վերացման անհրաժեշտության մասին միջազգային պայմանավորվածություն: Սա պահանջում է գենդերային հարցերը դասել կրթության ողջ համակարգի ու համապատասխան նյութական և ուժեղ քաղաքական աջակցության ապահովման շրջանակներում հիմնականների շարքը: Ընդ որում, աղջիկների կրթության հնարավորության սոսկ ապահովումն բավարար չէ. դպրոցում անվտանգ միջավայրի բացակայությունը և ուսուցիչների վարքագծում ու նրանց վերապատրաստման համակարգերում, դասավանդման և ուսուցման ընթացքում, ուսումնական ծրագրերում և դասագրքերում գենդերային կանխակալ մոտեցումների առկայությունը հաճախ դառնում են աղջիկների շրջանում մաղվելու ավելի բարձր աստիճանի և նրանց ավելի ցածր ուսման առաջադիմության պատճառ: Անվտանգ ուսումնական միջավայրի ստեղծումը, որը հաշվի է առնում գենդերային գործոնները, հնարավորություն կտա վերացնելու կրթության համակարգում աղջիկների ընդգրկելուն խանգարող հիմնական խոչընդոտը: Մեկ այլ կարևոր գործոն, որը նպաստում է աղջիկների համար կրթության զարգացմանը, կանանց շրջանում գրագիտության մակարդակի բարձրացումն է: Ուստի բոլոր մակարդակներում և բոլոր ասպարեզներում անհրաժեշտ են համալիր միջոցառումներ՝ ուղղված սեռի հատկանիշով խտրականության վերացմանը և աղջիկների ու տղաների, կանանց ու տղամարդկանց միջև փոխադարձ հարգանքի ապահովմանը: Դրա համար պահանջվում են համապատասխան փոփոխություններ սոցիալական դիրքորոշումներում, արժեքային պատկերացումներում և վարքագծի մոդելներում:

6 Կրթության որակի բարձրացումը նրա բոլոր ասպեկտներում և բոլորի համար ուսման լավ առաջադիմության ապահովումը, որպեսզի յուրաքանչյուրը կարողանա հասնել ուսուցման ըն-

դունված և գնահատման ենթակա արդյունքների, հատկապես գրաձանաչության, հաշվելու և կարևորագույն կենսական հմտությունների առումով

42. Որակը կազմում է կրթության էությունը, և աշխատանքը դասասենյակներում և տարբեր ուսումնական գործընթացների շրջանակներում հիմնարար նշանակություն ունի հետադաշում երեխաների, երիտասարդների և մեծահասակների բարեկեցությունն ապահովելու համար: Հենց որակյալ կրթությունն է հանգեցնում հիմնական կրթական կարիքների բավարարմանն ու սովորողների կյանքի բովանդակության ու նրանց լայն կենսափորձի հարստացմանը:

43. Անցած տասնամյակը ցույց տվեց, որ երեխաներին դպրոցում ընդգրկելու, նրանց այնտեղ պահելու և ուսուցման ասպարեզում լուրջ արդյունքների հասնելու խնդրի լուծման համար պահանջվում է, որ դպրոցում երեխաներին հավաքագրելու ընդլայնման ջանքերն ուղեկցվեն կրթության որակի բարձրացման միջոցառումներով: Կրթության համակարգերի ընդլայնման համար հաճախ օգտագործվում են բավական աղքատիկ ռեսուրսներ, որոնց դեպքում անհնար է բավարար ուշադրություն նվիրել որակի բարձրացմանն այնպիսի ասպարեզներում, ինչպիսիք մանկավարժների վերապատրաստումը և ուսումնական նյութերի մշակումն են: Վերջին շրջանում որոշ երկրներում անցկացված ուսման առաջադիմության մակարդակների գնահատումները ցույց են տվել, որ երեխաների զգալի մասը ձեռք է բերում այն գիտելիքների ու հմտությունների միայն աննշան մասը, որոնք նրանք պետք է յուրացնեն, ընդ որում, հաճախ հստակ չի որոշված այն բանի բովանդակությունը, թե նրանք ինչ պետք է յուրացնեն, վատ է դասավանդվում կամ ոչ ճիշտ է գնահատվում:

44. Անկախ սեռից, նյութական ապահովվածությունից, գտնվելու վայրից կամ ազգությունից բոլորի համար որակյալ հիմնական կրթության ապահովման համար կառավարությունները և ԿԲՀ մյուս բոլոր գործընկերները պետք է միահամուռ աշխատեն: Կրթական ծրագրերի հաջողությունը կախված է հետևյալ գործոնների առկայությունից՝ (1) առողջ, լավ սնվող և ուսման ձգտող սովորողների, (2) լավ պատրաստ-

ված մանկավարժների և ուսուցման ակտիվ մեթոդների, (3) պատշաճ շինությունների, սարքավորումների և ուսումնական նյութերի, (4) համապատասխան ուսումնական ծրագրերի, որոնց շրջանակներում դասավանդումը և ուսուցումը կարող են իրականացվել տեղական լեզվով՝ հենվելով մանկավարժների և սովորողների գիտելիքների և փորձի վրա, (5) այնպիսի ուսումնական միջավայրի, որը ոչ միայն նպաստում է ուսմանը, այլև բնութագրվում է բարեհաճությամբ, գեղարարական գործոնների հաշվառմամբ և առողջության ու պաշտպանվածության ապահովմամբ, (6) հստակ որոշված և ճիշտ գնահատվող ուսուցման արդյունքներից, ներառյալ գիտելիքները, հմտությունները, սոցիալական կողմնորոշումները և արժեքային պատկերացումները, (7) կառավարման և կազմակերպման համակարգի, որն ապահովում է բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությունն այս գործընթացներում, (8) տեղական համայնքների ու մշակույթների հարգանքի և այդ գործունեությանը նրանց ներգրավման:

IV. Ռազմավարություններ

45. Բոլորի համար կրթությունը զարգացման հիմքում ընկած մարդու հիմնական իրավունքներից է: Այն պետք է լինի ազգային և միջազգային առաջնահերթություն, որը պահանջում է ամուր և մշտական քաղաքական նվիրվածություն, զգալի ֆինանսական ռեսուրսներ և ԿԲՀ բոլոր գործընկերների մասնակցություն քաղաքականության ձևակերպման, ռազմավարական պլանավորման և ծրագրերի իրականացման գործընթացներում: Վերը թվարկված վեց նպատակներին հասնելը պահանջում է լայն մոտեցում, որը դուրս է ֆորմալ կրթության համակարգերի սահմաններից: Ինչպես վկայում են անցյալ տասնամյակի դասերը, հետևյալ ռազմավարությունների իրականացումը չափազանց կարևոր կլինի բոլորի համար կրթության նպատակներին հասնելու համար:

1 Ազգային և միջազգային մակարդակներում ապահովել ամուր քաղաքական նվիրվածություն բոլորի համար կրթությանը, մշակել գործողությունների ազգային ծրագրեր և զգալիորեն ավելացնել հիմնական կրթության մեջ կատարվող ներդրումները

46. Ըստ Ջոնսոնի գործողությունների շրջանակի՝ բոլորի համար հիմնական կրթության կարիքների ապահովման մեջ առաջընթացը ի վերջո կախված է առանձին վերցրած յուրաքանչյուր երկրի իրականացրած գործունեությունից: Սա նախևառաջ նշանակում է, որ կառավարությունները պետք է դրսևորեն ամուր քաղաքական նվիրվածություն և բավարար հատկացումներ տրամադրեն հիմնական կրթության բոլոր բաղադրիչներին, ինչն իր բոլոր քաղաքացիների առջև պետության պարտավորությունների կատարմանն ուղղված չափազանց կարևոր քայլ է: Բազմաթիվ երկրներում դրա համար պահանջվում է ավելացնել կրթությանը հատկացվող ազգային եկամտի և բյուջեի մասնաբաժինը և, այդ հատկացումների շրջանակներում, հիմնական կրթությանը՝ զարգացման նվազ առաջնահերթ խնդիրներին հատկացվող միջոցների կրճատման հաշվին: Հարկ է միջոցներն օգտագոր-

ծել առավել արդյունավետ և նպատակասլաց, իսկ կառավարությունները պետք է առաջադրեն կրթության ասպարեզի տարբեր ենթալորտների միջև դրանց առավել արդարացի բաշխման ասպահովման խնդիրներ: Կոռուպցիան գլխավոր խոչընդոտն է, որը խանգարում է կրթությանը հատկացվող միջոցների արդյունավետ օգտագործմանը, ուստի դրա դեմ պետք է անողոք պայքար մղել: Անհրաժեշտ են կառույցներ, որոնք հնարավորություն կտային քաղաքացիական հասարակությանը դառնալու թափանցիկ և հաշվետու բյուջետաֆինանսական համակարգի մաս: Բոլորի համար կրթության նպատակներին հասնելը պահանջում է նաև հասարակության մյուս հատվածների կողմից, ներառյալ տարբեր մակարդակների պետական մարմինները, մասնավոր հատվածն ու ոչ կառավարական կազմակերպությունները, ռեսուրսների առավել ստեղծագործական և երկարաժամկետ համախմբում:

47. Նույնիսկ ներքին ռեսուրսների առավել ակտիվ համախմբման, նրանց առավել արդարացի բաշխման և առավել արդյունավետ օգտագործման պայմաններում կրթության ասպարեզում բոլոր նպատակներին հասնելը պահանջում է լրացուցիչ ֆինանսավորում զարգացման հարցերով զբաղվող միջազգային հաստատությունների կողմից: Ֆինանսավորող հաստատությունները պետք է իրենց ռեսուրսների առավել զգալի մասնաբաժինը հատկացնեն հիմնական կրթության տարրական և այլ ծևերի աջակցությանը: Առանձնահատուկ ուշադրություն են պահանջում առավելագույն դժվարությունների բախվող տարածաշրջաններն ու երկրները՝ Սահարայից դեպի հարավ ընկած աֆրիկյան բազմաթիվ երկրներ, Հարավային Ասիայի երկրները, առավել պակաս զարգացած երկրները և հակամարտություններից դուրս եկող երկրները:

48. Միջոցների պակասը չպետք է խոչընդոտի բոլորի համար կրթության նպատակներին խորապես նվիրված ոչ մի երկրի դրանց հասնելու: Ֆինանսավորող հաստատությունները պատրաստ են հատկացնելու բավարար միջոցներ բոլորի համար կրթությունը ֆինանսավորելուն: Նման ռեսուրսների հատկացման բանալին ամուր քաղաքական նվիրվածության առկայությունը կամ ներուժն է. արդյու-

նավետ և թափանցիկ մեխանիզմներ ԿԲՀ ոլորտում ծրագրերի մշակման, իրականացման և մոնիթորինգի հարցերով քաղաքացիական հասարակության տարբեր կազմակերպությունների հետ խորհրդատվությունների համար. կշռադատված խորհրդատվական մեխանիզմներ ոլորտների ծրագրման և կառավարման ասպարեզում:

49. Նման նվիրվածությունը պահանջում է, որ ֆինանսավորող հաստատությունները համակարգեն իրենց ջանքերը, որոնք ուղղված են համաոլորտային բարեփոխումների շրջանակներում զարգացման ասպարեզին ճկուն օգնություն ցույց տալուն և աջակցեն կառավարության աղքատության նվազեցման հստակ և որոշակի ծրագրերի շրջանակներում ոլորտի առաջնահերթ խնդիրների լուծմանը: Նախևառաջ անհրաժեշտ է ապահովել պարտքերի բեռի վաղաժամկետ, առավել հիմնավոր և առավել լայն թեթևացում և/կամ չեղյալ հայտարարում աղքատության լծի նվազեցման նպատակներով՝ ստանձնելով կայուն պարտավորություններ հիմնական կրթության առնչությամբ: Պարտքի բեռի թեթևացումը չպետք է փոխարինի օգնությամբ:

50. Ֆինանսավորող հաստատությունները պետք է ստանձնեն առավել երկարաժամկետ և կանխատեսելի պարտավորություններ, ինչպես նաև լինեն առավել հաշվետու և թափանցիկ: Նրանք պետք է ներկայացնեն ժամանակին և ստույգ տեղեկատվություն իրենց վճարումների մասին և ապահովեն տարածաշրջանային և միջազգային մակարդակներում կանոնավոր հաշվետվողականություն:

2 Նպաստել կրթության ոլորտի կայուն և համալիր գործառնության շրջանակներում ԿԲՀ ասպարեզում քաղաքականության իրականացմանը, որը սերտորեն շաղկապված է աղքատության վերացմանն ու զարգացմանն ուղղված ռազմավարությունների հետ

51. Կրթությունը՝ սկսած մանկահասակ երեխաների խնամքից ու նրանց դաստի-

արակությունից ու վերջացրած ողջ կյանքի ընթացքում կրթությամբ, վճռորոշ դեր է խաղում մարդու հնարավորությունների ընդլայնման, ընտանեկան ու համայնքային մակարդակներում աղքատության վերացման և առավել արագ սոցիալ-տնտեսական զարգացման ապահովման մեջ: Միևնույն ժամանակ աղքատության նվազեցումը նպաստում է հիմնական կրթության նպատակներին հասնելու առաջընթացին: Ակնհայտ կապ գոյություն ունի կրթության զարգացման և աղքատության նվազեցման ռազմավարությունների միջև, և այս գործոնը պետք է օգտագործվի ծրագրերը պլանավորելիս և իրականացնելիս:

52. Աղքատության վերացման խնդրի նկատմամբ բազմաոլորտային մոտեցումը պահանջում է, որ կրթության ասպարեզում ռազմավարությունները լրացնեն արտադրական ոլորտների զարգացման ռազմավարությունները, ինչպես նաև այնպիսի ոլորտների, ինչպիսիք են առողջապահությունը, բնակչությունը, սոցիալական ապահովությունը, աշխատանքային ռեսուրսները, շրջակա միջավայրը և ֆինանսները, որոնք միաժամանակ սերտորեն շաղկապված են քաղաքացիական հասարակության հետ: Այս ուղղությամբ որոշակի գործողությունները ներառում են հետևյալը. (1) հիմնական կրթության ասպարեզում ռազմավարությունների ինտեգրումը ազգային և միջազգային մակարդակներում իրականացվող աղքատության նվազեցման առավել լայն միջոցառումներին, օրինակ՝ Միավորված ազգերի կազմակերպության զարգացման նպատակներով օգնելու շրջանակային ծրագրին (ՅՈՒՆԴԱՖ)՝ աղքատության նվազեցման ռազմավարության մասին ընդհանուր երկրների գնահատումներին և զեկույցներին համապատասխան. (2) «ներառական» կրթության համակարգերի զարգացումը, որոնք հստակ կսահմանեն բնակչության ամենաաղքատ և ոչ արտոնյալ խմբերի կարիքներն ու վիճակը, կուղղվեն այս խնդիրների լուծմանը և ճկունորեն կարծագանքեն դրանց:

3 Ապահովել քաղաքացիական հասարակության շահագրգռությունն ու մասնակցությունը կրթության զարգացման ռազմավարությունների ձևակերպմանը, իրականացմանն ու մոնիթորինգին

53. Սովորողները, մանկավարժները, ծնողները, համայնքները, ոչ կառավարական կազմակերպությունները և այլ խմբերն ու քաղաքացիական հասարակությունը ներկայացնող հաստատությունները պետք է ստանան նոր, առավել լայն քաղաքական և սոցիալական հնարավորություններ հասարակության բոլոր մակարդակներում, որոնք նրանց հնարավորություն կընձեռեն կառավարություններին ներգրավել երկխոսության մեջ, նրանց մղել որոշումների ընդունման և նորարարական գործունեության հիմնական կրթության նպատակներին հասնելու համար: Քաղաքացիական հասարակությունն ունի մեծ փորձ և պետք է կարևոր դեր խաղա ԿԲՀ նպատակներին հասնելուն խանգարող խոչընդոտների բացահայտման և դրանց վերացմանն ուղղված քաղաքականության ու ռազմավարության մշակման մեջ:

54. Նման մասնակցությունը, հատկապես տեղական մակարդակով դպրոցների ու համայնքների միջև գործընկերային հարաբերությունների զարգացման ճանապարհով, չպետք է սահմանափակվի միայն պետության որոշումների խրախուսմամբ կամ պետության կազմած ծրագրերի ֆինանսավորմամբ: Որոշումների ընդունման բոլոր մակարդակներում կառավարությունները պետք է ստեղծեն երկխոսության համար շարունակ գործող մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան քաղաքացիներին և քաղաքացիական հասարակության կազմակերպություններին մասնակցելու հիմնական կրթության ասպարեզում գործունեության ծրագրմանը, իրականացմանը, մոնիթորինգին և գնահատմանը: Սա մեծ նշանակություն ունի կրթության ոլորտում կառավարման հաշվետու, համապարփակ և ճկուն կառույցների զարգացմանը սատարելու համար: Հաճախ այդ գործընթացին աջակցությունն ապահովելու համար պահանջվում է ավելացնել քաղաքացիական հասարակության տարբեր կազմակերպությունների ներուժը:

4 Մշակել կրթության ղեկավարման ու կառավարման համակարգեր՝ հիմնված կարիքները հաշվի առնելու, լայն մասնակցության և հաշվետվողականության վրա

55. Վերջին տասնամյակի փորձն ընդգծեց կրթության համակարգերի ղեկավարումը բարելավելու անհրաժեշտությունը՝ դրանց արդյունավետության, հաշվետվողականության, թափանցիկության ու ճկունության մակարդակը բարձրացնելու և սովորողների բազմաբնույթ ու շարունակ փոփոխվող կարիքներն ավելի արդյունավետ բավարարելու նպատակով: Անհրաժեշտ է կրթության կառավարման շտապ բարեփոխում անցկացնել՝ կառավարման չափից ավելի կենտրոնացված, ստանդարտացված և հրամայական ձևերից անցնելու որոշումների ընդունման, կատարման և հաշվետվողականության առավել ցածր օղակներում մոնիթորինգի առավել ապակենտրոնացված և ժողովրդավարական ձևերի: Այս գործընթացները պետք է հենվեն կառավարման տեղեկատվական համակարգի վրա, որը կօգտագործի նոր տեխնոլոգիաների նվաճումները ժամանակին, արդիական և հավաստի տեղեկատվությամբ ապահովման գործում համայնքի լայն մասնակցության պայմաններում:

56. ԿԲՀ 2000 գնահատման հիման վրա կազմված երկրների ԿԲՀ զեկույցները և տարածաշրջանային գործողությունների շրջանակները պարունակում են հետևյալ հանձնարարականները. (1) մշակել գործողությունների առավել արդյունավետ նորմատիվ շրջանակներ և վարչական մեխանիզմներ ոչ միայն ֆորմալ և ոչ ֆորմալ տարրական կրթությունը, այլև մանկահասակ երեխաների, երիտասարդների և մեծահասակների համար կրթական ծրագրերը կառավարելու համար. (2) տարբեր մակարդակների պետական մարմինների պատասխանատվության հստակ սահմանազատում անցկացնել. (3) միջոցներ ձեռնարկել, որպեսզի ապակենտրոնացումը չհանգեցնի միջոցների անհավասար բաշխման. (4) առավել արդյունավետ օգտագործել առկա մարդկային և ֆինանսական ռեսուրսները. (5) ընդլայնել այնպիսի գործոնների օգտագործման ողջախոհի հնարավորությունները, ինչպիսիք են հասարակության բազմազանությունը, ոչ միատարրությունը և դինամիկան. (6) ինտեգրել կրթության ոլորտի շրջանակներում ծրագրերը և աջակցել դրանց մերձեցմանը այլ ոլորտների ծրագրերին, հատկապես առողջապահության, աշխատանքի և սոցիալական ապահովության ոլորտներում. (7) ապահովել դպրոցի ղեկավարության և կրթության մյուս աշխատողների վերապատրաստումը:

5 Բավարարել հակամարտություններից, տարերային աղետներից և անկայունությունից տուժած կրթության համակարգերի կարիքները և իրականացնել կրթական ծրագրեր՝ փոխընթացմանը, խաղաղությանը և հանդուրժողականությանն աջակցելու և բռնության ու հակամարտությունների կանխմանն օգնելու նպատակներով

57. Հակամարտությունները, անկայունությունը և տարերային աղետները կործանարար ներգործություն են ունենում կրթության վրա և դասվում են բոլորի համար կրթության նպատակներին հասնելու ճանապարհին հիմնական խոչընդոտների շարքը: Հարկ է ընդլայնել կառավարությունների և քաղաքացիական հասարակության հնարավորությունները կրթության ոլորտում երեխաների ու մեծահասակների կարիքներն արագ գնահատելու նպատակներով ճգնաժամային և հետբախումային իրավիճակների, անվտանգ և բարենպաստ պայմաններում կրթություն ստանալու կորսված հնարավորությունների վերականգնման և ավերված կամ վնասված կրթության համակարգերի վերակառուցման համատեքստում:

58. Դպրոցները հարկ է հարգել և պահպանել որպես սրբություններ և խաղաղության գոտիներ: Կրթության ասպարեզում ծրագրերը պետք է մշակվեն այնպես, որ նպաստեն մարդկային անհատականության համակողմանի զարգացմանը և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով (հոդված 26) հռչակված մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պահպանմանը: Նման ծրագրերը պետք է նպաստեն բոլոր ժողովուրդների և բոլոր էթնիկական ու կրոնական խմբերի փոխընթացմանը, հանդուրժողականությանը և բարեկամությանը. դրանք պետք է հաշվի առնեն մշակութային և լեզվական ինքնատիպությունը և հարգանքով վերաբերվեն բազմազանությանը. դրանք նաև պետք է ամրապնդեն խաղաղության մշակույթը: Կրթությունը պետք է ոչ միայն նպաստի այնպիսի ունակությունների զարգացմանը, ինչպիսին հակամարտությունները կանխելն ու դրանք խաղաղ ճանապարհով լուծելն է, այլև ամրապնդի սոցիալական և էթնիկական արժեքները:

6 Իրականացնել կրթության մեջ սեռերի հավասարության ապահովման համալիր ռազմավարություններ՝ այս ասպարեզում մոտեցումների, արժեքների և պրակտիկայի փոփոխության անհրաժեշտության ընդունման հենքի վրա

59. Բոլորի համար կրթության նպատակներին հասնելը պահանջում է կայուն նվիրվածություն և առաջնահերթ վերաբերմունք գենդերային հավասարության ապահովման նկատմամբ: Դպրոցները, ինչպես նաև այլ ուսումնական հաստատություններ և կրթության համակարգեր սովորաբար արտացոլում են ողջ հասարակության տրամադրությունները: Գենդերային հավասարության ապահովման ջանքերը պետք է ներառեն խտրականության դեմ պայքարի որոշակի գործողություններ, որն առաջանում է հաստատված սոցիալական վերաբերմունքի և պրակտիկայի, տնտեսական կարգավիճակի և մշակույթի հետևանքով:

60. Կրթության համակարգի մեջ մտնող բոլոր հաստատությունները պետք է աչքի ընկնեն նվիրվածությամբ այնպիսի տրամադրությունների և վարքագծի զարգացմանը, որոնք հիմնվեին գենդերային հիմնախնդիրների մասին իրազեկության և դրանց վերլուծության վրա: Կրթության համակարգերը պետք է նաև հստակ գործեն գենդերային կանխակալությունը վերացնելու նպատակով: Սա ներառում է այնպիսի քաղաքականության մշակման և իրականացման միջոցառումներ, որը կնպաստեր ուսման մեջ թե՛ աշակերտուհիների և թե՛ աշակերտների հաջողություններին: Ուսումնական հաստատությունները և կրթության մարմինները պետք է լինեն արդարացի և թափանցիկ, իսկ կանոնները և հանձնարարությունները, ներառյալ նրանք, որոնք վերաբերում են ծառայողական առաջխաղացմանը և կարգապահական միջոցառումների ընդունմանը, պետք է հավասարապես տարածվեն թե՛ աղջիկների և թե՛ տղաների, թե՛ կանանց և թե՛ տղամարդկանց վրա: Անհրաժեշտ է ուշադրություն նվիրել տղաների կարիքներին այն դեպքերում, երբ նրանց իրավունքները ոտնահարվում են:

61. Ուսումնական միջավայրում կրթության բովանդակությունը, գործընթացները

րը և պայմանները պետք է զերծ լինեն գենդերային կանխակալությունից՝ նպաստելով հավասարության հարաբերությունների ու փոխադարձ հարգանքի ամրապնդմանը: Սա վերաբերում է մանկավարժների վարքագծին ու վերաբերմունքին, ուսումնական ծրագրերի և դասագրքերի նյութերին, ինչպես նաև սովորողների փոխազդեցությանը: Անհրաժեշտ է անձնական անվտանգության ապահովմանն ուղղված ջանքեր գործադրել. աղջիկները հատկապես հաճախ են տուժում վատ վերաբերմունքից և ոտնձգություններից դպրոցի ճանապարհին և հետդարձին, ինչպես նաև դպրոցում:

7 Շտապ կարգով իրականացնել կրթական ծրագրեր և միջոցառումներ ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի համաճարակի դեմ պայքարի նպատակներով

62. Աշխարհի բազմաթիվ երկրներում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի համաճարակը խոչընդոտում է բոլորի համար կրթության ասպարեզում առաջընթացը՝ լուրջ ներգործություն ունենալով կրթության ասպարեզում պահանջարկի, սպառման և որակի վրա: Նման վիճակը անհետաձգելիորեն պահանջում է կառավարությունների, քաղաքացիական հասարակության և միջազգային հանրության ուշադրությունը: Կրթության համակարգերը պետք է զգալի փոփոխությունների ենթարկվեն, եթե ցանկանում են չեզոքացնել ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի համաճարակի կործանարար ներգործությունը և կանխել նրա տարածումը, հատկապես մանկավարժական կադրերով ապահովման պահանջարկի և սովորողների կարիքների վրա այս համաճարակի ներգործության առնչությամբ: ԿԲՅ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է առաջնահերթ ուշադրություն նվիրել ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի համաճարակին այն երկրներում, որտեղ այն ընդունել է առավելագույն ծավալներ՝ ընդսմին ապահովելով կայուն և երկարաժամկետ քաղաքական նվիրվածություն: ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի համաճարակի հետ կապված հարցերը ներառել քաղաքականության հիմնական ուղղություններում. վերանայել ուսուցիչների վերապատրաստման և դպրոցական ծրագրերի կազմման սկզբունքները. զգալիորեն ավելացնել այս գործունեության համար հատկացվող միջոցները:

63. Անցյալ տասնամյակը ցույց տվեց, որ համաճարակն արդեն ունեցել և էլ ավելի մեծ չափով կործանարար ազդեցություն կունենա կրթական համակարգերի, ուսուցիչների և սովորողների վրա: Ընդ որում, հատկապես տուժում են աղջիկները: ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի համաճարակն ուղեկցող ամոթի խարանը և աղքատությունը ծնունդ են կրթական համակարգերից դուրս մնացող երեխաների նոր սոցիալական կաստաներ և ապրուստի միջոցներ վաստակելու սահմանափակ հնարավորություններով մեծահասակներ: ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի համաճարակի հետևանքները մեղմելու համար խիստ կարևոր է մշակել մարդու իրավունքների պաշտպանության վրա հիմնված մոտեցում, ինչպես նաև իրականացնել ԿԲՅ նպատակների վրա այս համաճարակի ներգործության մշտադիտարկում: Նման մոտեցումը պետք է ներառի ՄԻԱՎ/ՁԻԱՅ-վարակալիչների կրթության իրավունքի ապահովման համապատասխան օրենսդրական և վարչական միջոցներ, ինչպես նաև կրթության ոլորտում խտրականության դեմ պայքարի միջոցներ:

64. Ուսումնական հաստատությունները և կառույցները պետք է ստեղծեն անվտանգ ու բարենպաստ միջավայր ՄԻԱՎ/ՁԻԱՅ-վարակալիչ երեխաների ու երիտասարդների համար և ամրապնդեն նրանց պաշտպանությունը սեքսուալ ոտնձգություններից և շահագործման այլ ձևերից: Հարկ է մշակել ՄԻԱՎ/ՁԻԱՅ-վարակալիչ ու այդ հիվանդությամբ տառապող երեխաների ու մեծահասակների նկատմամբ ճկուն ոչ ֆորմալ մոտեցումներ՝ առանձնահատուկ ուշադրություն նվիրելով հիվանդ որբերին: Կենսական հմտությունների ուսուցման վրա հիմնված ուսումնական ծրագրերը պետք է ներառեն գործունեության բոլոր կողմերը՝ կապված ՄԻԱՎ/ՁԻԱՅ-վարակալիչների բուժման ու այդ համաճարակի կանխարգելման հետ: ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի դեմ պայքարի ծրագրերը պետք է նաև օգուտ բերեն ծնողներին և համայնքներին: Մանկավարժները պետք է համապատասխան պատրաստություն և վերապատրաստում անցնեն ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ին վերաբերող հարցերի առնչությամբ, իսկ նրանք, ովքեր տուժել են այդ համաճարակից, պետք է բոլոր մակարդակներում աջակցություն ստանան:

8 Ստեղծել կրթության ասպարեզում անվտանգ, առողջ, ներառական և ռեսուրսներով արդարացիորեն ապահովվող պայ-

մաններ, որոնք կնպաստեն հաջող ուսուցմանը և բոլորի համար ուսման առաջադիմության հստակ սահմանված մակարդակներին հասնելուն

65. ԿԲԳ կարևորագույն պայմանը պետք է լինի ուսուցման որակը: Այս գործընթացի շրջանակներում բոլոր գործընկերները՝ ուսուցիչներն ու սովորողները, ծնողներն ու համայնքի անդամները, առողջապահության և իշխանության տեղական մարմինների աշխատողները պետք է համատեղ աշխատեն ուսուցման համար բարենպաստ միջավայրի ստեղծման ուղղությամբ: Որպեսզի ուսումնական հաստատությունները և ծրագրերը կարողանան ապահովել որակյալ կրթություն, նրանց պետք է արդարացի հենքի վրա տրամադրել համապատասխան ռեսուրսներ, ընդ որում՝ հիմնական պահանջներն են անվտանգ, էկոլոգիապես մաքուր և հեշտորեն մատչելի նյութական բազայի, աշխատելու մեծ ձգտում ունեցող և պրոֆեսիոնալ առումով իրազեկ ուսուցիչների, գրքերի և այլ ուսումնական նյութերի, որոշակի տեղական պայմաններին համապատասխանող, ծախսերի տեսանկյունից արդյունավետ և բոլոր սովորողներին մատչելի տեխնոլոգիաների առկայությունը:

66. Ուսումնական միջավայրը նույնպես պետք է առողջ, անվտանգ, մարդկանց նկատմամբ հոգատար վերաբերմունքին նպաստող լինի: Ընդ որում, պետք է ապահովվեն. (1) համապատասխան ջրամատակարարում և պատշաճ սանիտարական պայմաններ. (2) առողջապահության և սննդի ծառայությունների ուղղակի կամ անուղղակի մատչելիություն. (3) համապատասխան քաղաքականություն և վարքականոցներ, որոնք նպաստում են ուսուցիչների և սովորողների ֆիզիկական, հոգեւոր և հուզական վիճակի լավացմանը. (4) կրթության բովանդակությունը և պրակտիկան, որոնք նպաստում են գիտելիքների, սոցիալական կողմնորոշումների, արժեքների և ինքնահարգանքի, առողջության և անձնական անվտանգության ամրապնդման համար անհրաժեշտ կենսական հմտությունների յուրացմանը:

67. Գոյություն ունի արդյունավետ ռազմավարություններ մշակելու կենսական պահանջ սոցիալական, մշակութային և տնտեսական օտարացման զոհ հանդի-

սացող մարդկանց հայտնաբերելու և ներգրավելու համար: Սա պահանջում է ընտանիքի, համայնքի և դպրոցի մակարդակով անցկացնել օտարացման վերլուծություն՝ այս գործընթացում ներգրավելով հենց օտարացման զոհերին, ուսուցման նկատմամբ բազմաբնույթ, ճկուն և նորարարական մոտեցումների մշակում և փոխադարձ հարգանքի ու վստահության մթնոլորտին նպաստող միջավայրի ստեղծում:

68. Ուսուցման գնահատումը պետք է ներառի ուսումնական միջավայրի, ինչպես նաև համապատասխան գործընթացների և արդյունքների գնահատում: Ուսուցման արդյունքները պետք է հստակ սահմանվեն թե՛ ճանաչողական (կոգնիտիվ) և թե՛ ոչ ճանաչողական կողմերի տեսանկյունից և լինեն մշտական գնահատման օբյեկտ, որը կազմում է դասավանդման և ուսուցման անբաժանելի մասը:

9 Բարձրացնել ուսուցիչների կարգավիճակը, եռանդը և պրոֆեսիոնալիզմը

69. Ուսուցիչները կարևոր դեր են խաղում կրթության որակի բարձրացմանը սատարելու գործում, ընդ որում՝ թե՛ դպրոցներում և թե՛ համայնքի մակարդակում առավել ճկուն ծրագրերի շրջանակներում: Նրանք ոչ միայն աջակցում են նորարարական փոփոխություններին, այլև ակտիվորեն կենսագործում են դրանք: Կրթական ոչ մի բարեփոխում հաջողությամբ չի պսակվի, եթե ուսուցիչները դրան ակտիվորեն չմասնակցեն և այն չհամարեն իրենց կենաց գործը: Կրթության համակարգի բոլոր մակարդակներում ուսուցիչները պետք է հարգանք վայելեն և ստանան համապատասխան վարձատրություն, համապատասխան աջակցության հենքի վրա վերապատրաստվելու և իրենց որակավորումը մշտապես բարձրացնելու հնարավորություն ունենան, այդ թվում նաև՝ բաց և հեռավար ուսուցման միջոցով: Թե՛ տեղական և թե՛ պետական մակարդակներում նրանք պետք է հնարավորություն ունենան մասնակցելու իրենց մասնագիտական կյանքի և ուսումնական միջավայրի վրա ազդող որոշումների ընդունմանը: Ուսուցիչները նաև պետք է կարողանան մասնագիտական պատասխանատվություն ստանձնել՝ մնալով հաշվետու թե՛ սովորողների և թե՛ համայնքների առջև:

70. Հարկ է ունենալ հստակ ձևակերպված և ստեղծագործաբար հարստացված ռազմավարություններ լավ ուսուցիչներ գտնելու, ներգրավելու, վերապատրաստելու և ծառայության մեջ պահելու ուղղությամբ: Այս ռազմավարությունները պետք է կողմնորոշվեն դեպի ուսուցչի նոր դերը՝ սովորողներին նախապատրաստելու այսօր ձևավորվող տնտեսության պայմաններում գործունեության, որը հիմնվում է գիտելիքների և տեխնոլոգիաների վրա: Ուսուցիչները պետք է հասկանան ուսուցման ձևերի ու սովորողների ֆիզիկական ու մտավոր զարգացման ողջ բազմազանությունը և ապահովեն խթանող ուսումնական միջավայրի ձևավորումը՝ հիմնված լայն մասնակցության վրա:

10 Յուրացնել ԿԲՀ նպատակներին աջակցելու համար նոր տեղեկատվական և կոմունիկացիոն տեխնոլոգիաներ

71. Ողջախոհ ծախսերով ԿԲՀ նպատակներին հասնելուն պետք է նպաստի տեղեկատվական և կոմունիկացիոն տեխնոլոգիաների (ՏԿՏ) յուրացումը: Այս տեխնոլոգիաներն օժտված են գիտելիքների տարածման, արդյունավետ ուսուցման ապահովման և կրթության առավել ներգործուն ծառայությունների զարգացման մեծ ներուժով: Այս ներուժը չի իրացվի այնքան ժամանակ, քանի դեռ նոր տեխնոլոգիաները կօգտագործվեն որպես միայն օժանդակ գործիք, այլ ոչ կրթության ասպարեզում ռազմավարությունների իրականացման հիմնական շարժիչ մեխանիզմ: ՏԿՏ արդյունավետության ապահովման համար, հատկապես զարգացող երկրներում, դրանք պետք է զուգակցել առավել ավանդական տեխնոլոգիաների հետ, այնպիսիք, ինչպիսիք են գիրքն ու ռադիոն, ինչպես նաև առավել լայնորեն օգտագործել ուսուցիչներին վերապատրաստելիս:

72. ՏԿՏ զարգացման արագ բնույթը, նրանց հարաճուն տարածվածությունը և մատչելիությունը, նրանց բովանդակային էությունը, նրանց էժանացումը՝ այս ամենն ունեն ուսուցման համար լուրջ հետևանքներ: Առանձին դեպքերում ՏԿՏ կիրառումը կարող է հանգեցնել անհավասարության խորացման, սոցիալական կապերի թուլացման և մշակութային ամբողջականության համար սպառնալիքի ստեղծման: Ուստի

կառավարությունները պետք է մշակեն գիտության և տեխնիկայի նկատմամբ առավել հստակ քաղաքականություն և քննադատաբար գնահատեն ՏԿՏ օգտագործման պրակտիկան ու տարբերակները: Ընդ որում, հարկավոր է հաշվի առնել այն հարցը, թե ինչպես ՏԿՏ կիրառումը կարող է անդրադառնալ հիմնական կրթության ապահովման համար առկա ռեսուրսների վրա, և առանձնահատուկ ուշադրություն նվիրել այն մոտեցումներին, որոնք հնարավորություն են ընձեռում հաղթահարելու «թվային անդունդը», կրթությունն առավել մատչելի և որակյալ դարձնել և կրճատել անհավասարությունը:

73. ՏԿՏ ներուժն անհրաժեշտ է նաև օգտագործել այն բանի համար, որպեսզի՝ բարելավել տվյալներ հավաքելու և վերլուծելու մեխանիզմները և ամրապնդել կառավարման համակարգերը, ներառյալ կենտրոնական նախարարությունները, վարչական միավորների կրթության մարմինները և անմիջականորեն դպրոցները. մեկուսացված շրջաններում ապրող կամ անբարենպաստ վիճակում գտնվող համայնքներին կրթության առավել լայն մատչելիություն ընձեռել. ապահովել ուսուցիչների վերապատրաստման և որակավորման մշտական բարձրացման աջակցությունը. ստեղծել կոմունիկացիաների համար հնարավորություններ՝ չսահմանափակվելով դասասենյակի պատերով կամ այս կամ այն մշակույթի շրջանակներով:

74. Անհրաժեշտ է նաև կրթության համակարգերի հետ գործընկերային կապերի ստեղծմանն ու ամրապնդմանը ներգրավել զանգվածային լրատվության միջոցներին՝ տեղական մամուլի զարգացման, կրթությանն առնչվող հարցերի որակյալ լուսաբանման և հանրային հաղորդման ծառայություններով կրթական ծրագրերի մշտական հեռարձակման միջոցով:

11 Կանոնավորապես հետևել ԿԲՀ նպատակների և ռազմավարությունների իրականացման գործում առաջընթացին ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում

75. ԿԲՀ նպատակների իրականացումը պահանջում է առաջնահերթությունների սահմանում, քաղաքականության որոշում, խնդրի առաջադրում, առաջընթացի ցուցիչ հանդիսացող ցուցանիշների մշակում, միջոցների հատկացում, ձեռքբերումների մոնիթորինգ և ստացված արդյունքների քանակի և որակի գնահատում: Կրթության ասպարեզում հավաստի և հուսալի վիճակագրական տվյալները, որոնք մանրամասն տեղաբաշխված են և հիմնված մարդահամարների ստույգ տվյալների վրա, կարևոր նշանակություն ունեն ձեռք բերված հաջողությունների ճիշտ քանակական գնահատման, փորձի փոխանակման ապահովման և անցյալից դասեր քաղելու վրա: Անհրաժեշտ է նաև տեղեկատվություն հաջողված համարված որոշակի ռազմավարությունների, առանձին երկրներում և ողջ աշխարհում հիմնական կրթության ֆինանսավորման մակարդակի և «Կրթություն բոլորի համար» արշավին քաղաքացիական հասարակության մասնակցության մասին: Այս բոլոր տարրերը համարվում են վճռորոշ ԿԲՀ գործընկերների պատասխանատվությունը գնահատելիս: Հարկ է խթանել ԿԲՀ մոնիթորինգը և գնահատումը մշտական հենքի վրա՝ այս գործում քաղաքացիական հասարակության առավելագույն ներգրավմամբ:

76. Երբ կառավարությունները կրթության ասպարեզում իրոք նվիրված են որոշակի արդյունքների հասնելու գործին, նրանք հասկանում են վիճակագրական տվյալների հիմնարար նշանակությունը և նման տվյալներ պատրաստող հուսալի և անկախ հաստատություններ տնօրինելու անհրաժեշտությունը: ԿԲՀ 2000 գնահատման շրջանակներում հայտնաբերվել են նման տվյալների հետ կապված լուրջ բացթողումներ: Անհրաժեշտ է ամրապնդել ներուժը, որը հնարավորություն կտա լրացնել այդ բացերը և կարգավորել վերլուծության անցկացման և հետադարձ կապի ապահովման համար անհրաժեշտ որակական և քանակական ցուցանիշների ստույգ և ժամանակին ներկայացումը, ինչը հետաքրքրություն է ներկայացնում թե՛ քաղաքական ղեկավարների և թե՛ գործնական աշխատողների համար: Հարկ է նաև ակնդետ ուշադրություն նվիրել կրթության համակարգի կառավարման առավել ցածր մակարդակներում ապախոջորացված վիճակագրական տվյալներ հավաքելուն՝ ընդամենի հետապնդելով մի կողմից՝ այն ասպարեզների վերհանման խնդիր, որտեղ հավասարության սկզբունքներն առավել չափով են խախտվում, և մյուս կողմից՝ տեղական մակարդա-

կով ծրագրման, կառավարման և գնահատման անցկացման համար անհրաժեշտ տվյալների պատրաստման խնդիր:

77. ԿԲՀ նպատակների և խնդիրների իրականացման գործում առաջընթացը պետք է ենթարկվի կանոնավոր և սխտեմատիկ հիման վրա գնահատման՝ իմաստավորված համեմատական վերլուծության ապահովման նպատակով: Ազգային և միջազգային մակարդակներով առավել կատարյալ տվյալների առկայությունը կառավարություններին, քաղաքացիական հասարակությանը և այլ ինստիտուտների հնարավորություն կտա առավել հստակ պատկերացում կազմելու այս նպատակների իրացման գործում առաջընթացի մասին, հայտնաբերելու այն տարածաշրջանները, երկրները և երկրների ներսում վարչական միավորները, որոնցում նկատվում են առանձնահատուկ հաջողություններ կամ դժվարություններ, և ապա անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել:

12 Ամրապնդել առկա մեխանիզմները՝ բոլորի համար կրթության ապահովման ճանապարհին առաջընթացն արագացնելու համար

78. Սույն Գործողությունների շրջանակում ներկայացված վեց նպատակների իրականացման համար կարևոր նշանակություն ունի միջազգային, տարածաշրջանային և ազգային մակարդակներում տարբեր մեխանիզմների առկայությունը, որոնք ունեն լայն հենք և ընդգրկում են գործընկերների լայն շրջանակ: Այս մեխանիզմների գործառույթները տարբեր չափով կներառեն քարոզչական գործունեություն, ռեսուրսների համախմբում, մոնիթորինգ, գիտելիքների կուտակում և համատեղ օգտագործում:

79. Բոլորի համար կրթության ասպարեզում հիմնական գործունեությունը պետք է իրականացվի ազգային մակարդակում: Կապահովվի ԿԲՀ ազգային ֆորումների ամրապնդում կամ ստեղծում, ընդ որում երկրները 2002 թվականից ոչ ուշ կպատրաստեն ԿԲՀ ասպարեզում ազգային ծրագրեր: Այն երկրներին, որոնք բախվում են այնպիսի լուրջ հիմնախնդիրների, ինչպիսիք են ճգնաժամերը կամ տարերային աղետներ:

րը, միջազգային հանրությունը հատուկ տեխնիկական աջակցություն կտրամադրի: Միջազգային հանրության անդամները պարտավորվում են աշխատել հետևողական, համակարգված և կանոնավոր հենքի վրա՝ ԿԲՀ ասպարեզում ազգային ծրագրերին սատարելու նպատակով:

80. Տարածաշրջանային և ենթատարածաշրջանային միջոցառումները ի աջակցություն ազգային ջանքերի կհիմնվեն այսօր գոյություն ունեցող կազմակերպությունների, ցանցերի և նախաձեռնությունների վրա, որոնք ըստ անհրաժեշտության կընդլայնվեն: Այս աշխատանքը կվարվի ԿԲՀ ազգային ֆորումների հետ համատեղ:

81. ՅՈՒՆԵՎՍՕ-ն հետագայում էլ, իր մանդատին համապատասխան, կկատարի ԿԲՀ գործընկերների գործունեության համակարգողի ու այս ասպարեզում նրանց համատեղ ջանքերի շարունակականության երաշխավորի դերը: Դրան համապատասխան ՅՈՒՆԵՍՎՕ-ն ամեն տարի կգումարի բարձր մակարդակի փոքր խումբ, որը, գործելով ճկուն հենքի վրա, կծառայի որպես քաղաքական աջակցության ապահովման և տեխնիկական ու ֆինանսական ռեսուրսների համախմբման գործիք: Նրա կազմի մեջ կմտնեն կառավարությունները, քաղաքացիական հասարակությունը ներկայացնող ղեկավարներ և զարգացման հարցերով զբաղվող հաստատություններ: Կրթության ասպարեզում իր ծրագիրը ՅՈՒՆԵՍՎՕ-ն կվերակողմնորոշի այնպես, որպեսզի նրա գործունեության կենտրոնում գտնվեն Դակարի համաժողովի արդյունքներն ու առաջնահերթությունները:

82. Բոլորի համար կրթության նպատակներին հասնելը պահանջում է ազգային կառավարությունների և երկկողմ ու բազմակողմ դոնորների, ներառալ Համաշխարհային բանկը և տարածաշրջանային զարգացման բանկերը, քաղաքացիական հասարակությունը և տարբեր հիմնադրամներ, նոր, որոշակի ֆինանսական պարտավորություններ:

Դակարի գործողությունների շրջանակները

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻ ՅԱՄԱՐ.

**մեր ընդհանուր պարտավորությունների
կատարումը**

Թարգմանությունը և տպագրությունը՝

«Յուլսի կամուրջ» ՅԿ-ի

Տպագրությանն աջակցել են

«Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության
դանիական կազմակերպությունն ու

Դանիայի միջազգային զարգացման գործակալությունը